



(Խ. Տարի) ՅՈՒՆԻՍԻՐ 1933

(9me Année) Janvier 1933

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Նոր տարւումն սեմէն ներս

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Ամանոր

Ս. Հոգին ինչպէ՞ս կը յայտնէ Ինքզինքը

(Վեր. Մ. Տէր ՍաՀակեան

Ազատ Թարգ. Ն. Մ

Սամուէլ Պ.

Տարեւիցի խոսումներ

Մեղքերու թողութիւն

Մեր յանձնառութիւնը

Օտար ավուներ

Տր. Փ. Պէրրոն

Թարգ. Վ. ՍաՀակեան

Կենսագրական

Կոմս Յինցէնտորֆ

X X X

Մանկանց սիւնակ

Կաղանգի նուէրը

Զանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի Յշմարտութեան խօսքին ներկայացուցիչն ալ չճանճար ո եւ է յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է, **Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԱԼԵԱՆ**

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՄՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ ֆրանսա եւ Սուրիա 15 ֆրանք
Արտասահման 20 ֆրանք կամ 30 ՍԷՆԹ

ԹՈՒՐԻՔԵՐԷՆԸ ֆրանսա եւ Սուրիա 7 ֆրանք
Արտասահման 10 ֆրանք կամ 10 ՍԷՆԹ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԻՔԵՐԷՆ միասին ֆրանսա եւ
Սուրիա 20 ֆրանք եւ Արտասահման 27 ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 ՍԷՆԹ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

ԲԱՆԲԵՐ

Արթնցի՛ր դու՛ն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
առայ:
Եփես. ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր համգիտոր մտնելու խոտովանքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1955

Թիի 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԷՆ ՆԵՐՍ

Գիտեմ՝ որու եմ հաւատացեր,
եւ համոզուած եմ...

Բ. ՏԻՄ. Ա. 12

Երբ նոր տարին կը մօտենայ, ամէն մարդ
քնադղական գործութեամբ կարծես անցեալ տար-
ուան գործունէութեան հաշուեյարդար մը ընելու
կը մղուի:

Վաճառականն իր տոմարները կը բանայ եւ
պարտքի ու պահանջքի էջերը քննելէ յետոյ
Մայր տոմարին մէջ կ'արձանագրէ բոլոր տար-
ուան հաշուեկշիռը եւ անոնցմէ երեւան եկած
արդիւնքը:

Երկրագործն ու այգեպանը, փաստաբանն ու
մտաւոր աշխատող իւրաքանչիւր ոք իրենց յա-
տուկ հաշուեյարդարներն ունին:

Հոգեւորներն ալ իրենց հոգեւոր կեանքի
պարագաներն ու գործունէութիւնները նկատի
առնելով, անոր համաձայն իրենց հաշուեյար-
դարներն ընելէ յետոյ նոր տարուան համար նոր
էջ մը կը բանան, նոր եռանդով ու նոր սրտով մ-
տնդով:

Ու նոր տարուան սեմէն ներս անցնելու պա-
հուն, մենք՝ «Բանբեր»ի ընտանիքն եւս բնական
բերումով խոր զգացումներու եւ խորհրդածու-
թեանց կը մղուինք:

Նախ երախտագիտական զգացումներով կը
պարարուինք հանդէպ երկնաւոր Հօրը, որ անց-
եալի մէջ իր քաղցր ներկայութեամբն ու Հայ-
րական գործովը պահեց զմեզ եւ առաջնորդեց
մեզի մինչեւ այսօր, ու մենք փառաբանական
երգ մը երգելէ յետոյ կը նայինք ընդ առաջ դէ-
պի նոր տարին, ու թէեւ առաջին վայրկեանին
ամէն ինչ մութին մէջ ծրարուած, անորոշ ու
անյայտ կը գտնենք, այսու ամենայնիւ մեզմէ

անոնք որ ունին ճշմարիտ վստահութիւն մը առ
Այն, դիւրութիւն ունին խօսելու առաքեալին
պէս,

Գիտեմ՝ որու եմ հաւատացեր.— Անոնք որ կը
տատամսին վստահօրէն այս խօսքն ըսելու, ան-
շուշտ ունենալու են արդիւրոյ պատճառներ, մեղ-
քը, որ անոնց թող չտար ազատօրէն խօսելու
գիտեմ...

Առաքեալին այս խօսքը իր կեանքին մէջ
ամենէն վստահօրէն ու զիտակցութեամբ արտա-
յայտուած խօսքերէն մին է: Ինքը կը հաւատայ.
բայց այդ հաւատքը անորոշ ու ստուերոտ հա-
ւատք մը չէ: Մուհամեդականներու ունեցածին
պէս ճակատադրական հաւատք մը չէ, որ բոլոր-
ովին կրաւորական դիրք մը ունի: Չէ նաեւ ներ-
կայ պաղ, քրիստոնէական (կոչուող) ճակատազը-
րական հաւատքը, որ թէեւ զինքը չքմեղացնող
մէկ երկու տկար փաստեր կրնայ գտնել Աստու-
ծոյ խօսքին մէջ, բայց դարձեալ տկար ու դիւ-
րաբեկ հաւատք մըն է: Առաքեալը կը հաւա-
տայ. այս հաւատքը կենդանի հաւատք մըն է,
հաստատուն, զիտակից: Գիտեմ: Ասիկա զի-
տութիւն մըն է, ոչ թէ տեսական, այլ փորձառու-
ական: Այս փորձառական հաւատքը հիմնուած է
ուրիշներու կեանքին ու իր անձնական փորձա-
ռութեան վրայ: Իր միտքն է Նաբուզոդոնոսորի
առջեւ կայնող երեք հրեայ երիտասարդներուն
հաւատքը, որ զիրենք ամօթով չձգեց: Մոռցած
չէ Բահադիմի չորս հարիւր մարդարէներուն Կար-
մեղոսի վրայ հաւատքով աղօթելը, անոնց աղա-
ղակները, իրենց մարմիններուն կտրտելը եւ ի-
րենց անպատասխանի մնալը, քանզի իրենց հա-
ւատքի առարկան ճշմարիտ անձը չէր: Իսկ միւս
կողմէ Եղիա կարճ աղօթքով մը երկինքէն կրակ

իջեցուց ու զոհը այրեց, քանզի անիկա գիտէր ո՛րու էր հաւատացեր: Առաքեալը ունի նաեւ իր անցեալի փորձառութիւնները: Տարիներու ընթացքին մէջ ինքը բռնած է Անոր ձեռքէն և Ան իր ձեռքէն եւ այդ սեղմ ու մտերիմ յարաբերութիւններէն և իր մանկական վստահութենէն մե՛ծ, անպատմելի՝ շնորհքներ վայելած է: Աստուածային այդ սիրոյ խոստովներուն ապացոյցները այնքան յստակ տեսած է անցեալին մէջ իր մարմնոյն ու հոգիին վրայ, եւ Անկէ բնաւ խաբուած չէ, որ կրնալ ալ վստահութեամբ ըսել, զի. տե՛մ: Այս գիտութիւնը միայն մտքի զիտութիւն մը չէ, այլ նաեւ սրտի, որով նա հաւատքի վստահ գիտակցութեամբ կ'ըսէ, Ու համոզուած եմ:

Այս համոզումին ետեւը որպէս կոռուան կը կանգնին իրեն Դամասկոսի ճամբուն ղէպքի բաքանչիւր յուշարձանը. ա. բ. գ. միսիոնարական ճամբորդութիւններն ու անոնց յարակից վտանգ. նեղութիւն: Յամաքի ու ծովու վրայ, Միջերկրականի խորերը, վտանգները լեռներու եւ անապատներու ամայութեանց մէջ. վտանգները աւազակներէն, հեթանոսներէն, հրէաներէն եւ սուտ եղբայրներէն, հիւսուած ըլլալով քսանը եօթը տարուան յարաժամ շարժուն կեանքի մը դառն յուշերով: Այսու ամենայնիւ կը կանգնին նաեւ քըսանը եօթը տարուան մշտական յստակ առաջ. նորդուժեան աստուածային ապացոյցները, որ իր սիրտը խաղաղութեամբ եւ ուրախութեամբ, գոհութեամբ և երախտագիտութեամբ լեցուցած էին: Պողոս իր փորձառութեամբը տեսած էր, զիտէր եւ համոզուած ըլլալով օրէ օր աւելի սեղմօրէն փարած էր այդ բարեւար ձեռքին:

Իրաւ նա խօսեցաւ շատ մը հաւատքի գիտակից խօսքեր, որոնք համեմատելով մարդկային միջակ չափանիշներուն յանդուգն ու յախուռն խօսքեր են: Օրինակ, Քրիստոսի հետ խաչը ելալ, եւ ալ կենդանի եմ ոչ թէ ես հապա Քրիստոս կենդանի է իմ մէջ: Ամէն բանի կարող եմ Անով որ զիս զօրացուց: Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի: Ինծի համար ապրիլը Քրիստոս է: Գոհութիւն Աստուծոյ որ միշտ յաղթող կ'ընէ մեզ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ: Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի, եւ այլն. բայց այդ խօսքերուն ետեւը պահուած է այդ փորձառական գիտութիւնը եւ համոզուած ըլլալը: Նա կը հաւատայ նաեւ վաղուան ու ապագային համար կատարեալ վստահութեամբ եւ առանց ուշաքի մը, կը հաւատայ իր բոլոր էութեամբ: Այս

հաւատքը ոչ թէ փրկիստիակական է, ոչ թէ սիւթէմի մը, ոյժի մը, սկզբունքի մը վրայ հիմնուած հաւատք մըն է, այլ կենդանի անձի մը, Քրիստոսի վրայ: Ուրեմն հաւատոյ կեանքին միակ երկու եզրերն են հաւատացող անձը եւ հաւատքի առարկան եղող Քրիստոսը, որ ոչ թէ անցեալի պատմութեան անցած մէկն է, հապա նոյնն է այսօր եւ նաեւ յաւիտեանս նոյն իշխանութիւնով, Որով նա վստահ ընդ առաջ կը նայէր:

Արդ մեր խորհրդածութիւնները ամփոփելով եւ անդրադառնալով մեր անձնական կեանքին ու օրուան պարագաներուն, երբ նոր տարուան սեմէն ներս կը մտնենք, յիշենք մենք եւս այդ կենդանի հաւատքը առաքեալին ու մենք ալ մեր պարագաներովը, որոնք Պողոսինէն երբէք վատ չեն, անոր նման կենդանի վէճէն յանձնուինք մեր ներկայովն ու ապագայովը:

Բայց պիտի ըսես թէ փորձած ես ու յաջողած չես միշտ: Նախ, ըսեմ քեզ թէ շնչաւոր մարդը Աստուծոյ բաները չհասկնար եւ շնչաւոր մարդուն համար քրիստոնէական ամէն բան դժուար է. նոյնիսկ մեղքերու թողութեան վստահութիւնը շատ դժուար է, քանի որ նման բաները միայն հաւատքի վրայ հաստատուած են: Արդ, առաջին քայլդ թող ըլլայ անձնաքննութիւն սա հարցին նկատմամբ, իրաւ ես ապաշխարած եմ, Տէրը իմ մեղքերս ներած է, զիտե՛մ զայս, վստահ եմ ասոր, Նախ այս հարցը լուծէ: Կամ պիտի ըսես, թէ եւ Տէրը մէկ զաւակն ես, բայց դեռ չունիս վստահութիւն առաքեալին հետ անոր մտքով զալիքին վրայ նայիլ: Հաւատացեալ մը առաջին վայրկեանէն սկսեալ միշտ նոյնը չըլլար, կայ յառաջդիմութիւն: Աւելի պիտի լուսաւորուինք, կատարեալ պիտի ըլլանք: Իրաւ պիտի ըլլան կեանքի մէջ տկար ժամեր եւ սակայն որոնց վրայ յաղթութեան ամէն խոստում ունինք: Աստուծոյ վստահելով, Քրիստոսի տարած յաղթութեանը նայինք եւ Յաղթականին ետեւէն քալենք հաւատքով, վստահելով թէ ապագան արդէն նախատեսուած է չօրը կողմէն եւ անոր յաղթութեան միջոցներն ալ ապահովուած Անկէ վախճալիք չունինք:

Արդ հաւատքով մտիք նոր տարուան սեմէն ներս, հաւատքով զիտէ ինչ որ առջեւդ մութին մէջ ծրարուած է և գիտակցութեամբ համոզուած ըլլալով Հայրական բարձրագոյն ղեկավարութեան երգէ.— Լոյս Բարեբար տիրող մէզին մէջէն... Մութ է զիշերն... Պահէ քայլերս, խնդիրքս չէ բնաւ տեսնել հեռուն, Ինծի մէկ քայլ է բաւ:

Չայս երգենք ամէն օր ուրախութեամբ Յ. Ն. Ղ.

ԱՄԱՆՈՐ

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

Հանդարտ ու լռիկ մեր երկիրն հսկայ
Դարձեալ բոլորեց մէկ շրջան ահա,
Տարի մ'ալ անցաւ յաւիտեան անդարձ,
Ի զուր է փնտոել, չունի յետագարձ.
Ժամանակ է այժմ հաշիւ տեսնելու,
Անցեալ շրջանէն դասեր սորվելու.
Շահած ես արդեօք, ով անմահ հոգի,
Բան մը մընայուն, յարմար երկիրնքի:

Տարիներ կուգան, կ'անցնին ու կ'երթան,
Մարդկային հոսանք խոր գետի նըման
Անդադար հոսի գէպի գերեզման,
Սակայն դամբան չէ իր վերջին կայան.
Կեանքի անիւր շարունակ դառնայ,
Ամէն ինչ փոխուի որպէս սինեմայ.
Ի՞նչ է քու դիրքը, ո՞վ անմահ հոգի,
Գտած ես անշարժ վէմը հաւատքի:

Շատ մը երազներ քու անցեալ տարուան
Իրար ետեւէ յօգըս ցնդեցան.
Շատ մը խոստումներ եւ որոշումներ
Չորոնք դու գաղտնի կամ յայտնի ըրիր,
Անկարող եղար լրիւ կատարել,
Եւ Տէրոջ առջեւ անպարտ երեւիր.
Ի՞նչ պիտի ընես, ո՞վ անմահ հոգի,
Եթէ ճիշդ հիմա հաշիւդ պահանջուի:

Քանի չէ մարած դեռ կեանքիդ արեւ,
Քանի դեռ վայելս Աստուծոյ պարգեւ,
Առանց յամելու դիմէ Յիսուսին՝
Անըսպառ ոյժի, սիրոյ Աղբիւրին.
Վըստահէ Անոր քու բոլոր սրտով,
Նա քեզ կ'ընդունի ամենայն սիրով.
Յանձնում պիտ' տեսնես մէկ նոր յայտնութիւն,
Քու տկար կամքիդ մէկ նոր զօրութիւն:

Երբոր այս նորոգ կեանքին զիտակից
Չարը նուաճող Ոյժին զինակից՝
Նոր տարուան սեմէն ներս մըտնես այսօր,
Բիւրաւոր սուրբեր պիտ' կազմեն թափօր,
Տօնելու ցնձմամբ դարձըդ սիրալի,
Եւ ներբողելու Փրկիչն պաշտելի.
Յայնժամ դուն անվախ եւ հաստատ քայլով
Կրնաս ընթանալ ճամբադ անվրդով:
Ալֆօրվիլ (Վիւր.) Մ. ՏէՐ ՍԱՀԱԿԵԱՆ



ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻՆՉ ԿԵՐՊՈՎ

ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ

Սուրբ Հոգիով լեցուած քրիստոնեայի մը ուրոշիչ յատկանիշները ի՞նչ են:

Ըսուած է թէ, «Ան որ ամենէն շատ լեցուած է Սուրբ Հոգիով, ամենէն շատ կը խօսի Տէր Յիսուսի վրայ»: Ի՞նչ գեղեցիկ արտայայտութիւն: Մենք շատ կը խորհի՞նք եւ շատ կը խօսի՞նք Անոր վրայ:

Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Հոգիով լեցուեցէք. եւ սաղմոսներով ու օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով մէջերնիդ խօսակցելով՝ երգեցէք ու սաղմոս ըսէք Տէրոջը ձեր սիրտերուն մէջ» (Եփ. Ե. 18-19): «Ամէն ալ Հոգով Սրբով լեցուեցան ու սկսան... խօսիլ»: Եթէ չենք ուզեր իրարու հետ խօսիլ եւ պատմել Տէրոջը մեզի ըրած մեծ բաները, Սուրբ Հոգիով լեցուած չենք:

Աստուած Սուրբ Հոգին տալով ինքզինքը կուտայ. ուստի ինք չկրնար ծածկուիլ: Յովհաննէս Մկրտիչ, Յիսուսի մեծ կարապետը, որ Սրբ. Հոգիով լեցուած էր, երկու մեծ բնաբան ունէր, «Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (Յովհ. Ա. 29), եւ «Անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգով Սրբով ու կրակով» (Մատ. Գ. 11): Սուրբ Հոգին մեզի խօսիլ կուտայ (Գործ. Բ. 4) Ուրեմն յօժարինք խօսելու:

Շատ մը քրիստոնեաներ ինքզինքնին կատարեալապէս Տէր Յիսուսի յանձնելով հանդերձ Սուրբ Հոգիին զօրութիւնը չեն զգար, ուստի դառն յուսախաբութեան կը մատնուին: Իրենց փորձառութիւնը ուրիշներու փորձառութեանց հետ բաղդատելով՝ կը տրտմին եւ ուրիշներու յաջողութիւնը տեսնելով կը յուսահատին:

Չմոռնանք թէ մեզի չիյնար որոշելու թէ ի՞նչ կերպով Աստուած Իր օրհնութիւնը մեր վըրայ պիտի թափէ: Յիմարութիւն պիտի ըլլա՞ր Ս. Հոգին առաջնորդելու, դեկավարելու կամ սահմանափակելու աշխատիլ:

Կարծես թէ ոմանք ներքին յուզում մը կամ ելեքտրական ցնցում մը կ'ակնկալեն: Աստուած խոստացած է թէ մեր էութեան խորերէն կենդանի ջուրերու գետեր պիտի հոսին աշխարհի կազդուրման համար եւ ոչ թէ անձնական վայելքի մը համար: Զգուշանանք որ չըլլայ թէ զԱստուած սահմանաւորենք: Անոր ուզածն է որ մենք Իր Որդւոյն պատկերին կեպարանակից ըլլանք եւ

ոչ թէ ուրիշ քրիստոնեաներու փորձառութեան մասնակից:

Չակնկալենք որ մեր մէջ գործող Սուրբ Հոգին զօրութիւնը շարունակ զգալի ըլլայ մեզի: Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն կը գրէ, «Եւ ես տկարութիւնով ու վախով ու շատ դողով ձեր քով կեցայ, ու իմ խօսքս և քարոզութիւնս... Հոգւոյն ու զօրութեան ապացուցութիւնովն էր (Ա. Կոր. Բ. 3-4): Անիկա կ'ըսէ, «Երբ կը տկարանամ, այն ատեն զօրաւոր եմ»: Տկար կ'զգար, սակայն զօրաւոր էր: «Ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուն վրայ պիտի պարծենամ, որպէսզի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի» (Բ. Կոր. ԺԲ. 9-10):

Սուրբ Հոգիով լեցուիլ կը նշանակէ Քրիստոս փառաւորել մեր կեանքերովն ու շրթունքներովը: Միշտ երգելու փափաքը պիտի չզգանք, սակայն միշտ ծառայելու յօժար պիտի ըլլանք:

Քրիստոնեայ գործիչներու համար գումարուած ժողովի մը մէջ՝ մարդ մը յայտարարեց թէ հինգ շաբաթ այլակերպութեան լերան վրայ բռնակած էր: Մը. Մուտի, որ նոյն ժողովին կը նախագահէր, ըսաւ, «Կեցիր վայրկեան մը, եղբայր, այդ հինգ շաբաթուան միջոցին քանի՞ հոգի Քրիստոսի առաջնորդեցիր»: «Չեմ գիտեր», եղաւ պատասխանը: «Որեւիցէ մէկին դարձի գալը գիտես», հարցուց Մը. Մուտի նորէն: «Կը վախնամ թէ չեմ գիտեր», պատասխանեց անիկա: Մը. Մուտի ըսաւ, «Շատ բարձր կը բնակիս, ոչ մէկ անհատ այնչափ բարձր բնակելու է որ չի կարենայ հոգիներու հասնիլ»:

Նոյնիսկ եթէ Անոր մեր մէջ գործելուն ամենափոքր ապացոյցը չտեսնենք կամ չզգանք, հաւատալու ենք թէ Անիկա մեր մէջ կը բնակի եւ վստահելու ենք թէ Իր նպատակները կը գործադրէ մեր մէջ եւ մեր միջոցով:

Իսրայէլացիները Սրբութիւն Սրբութեանց մէջ հովանի եղող Աստուծոյ փառքը երբեք չտեսան, սակայն Անոր ազդեցութեան տակ միայն կը գործէին ու կը շարժէին: Անոնց ամբողջ հաւատքը հիմնուած էր Աստուծոյ անտեսանելի փառքին ներկայութեանը վրայ:

Զմոռնանք թէ Սուրբ Հոգիին զօրութեան ապացոյցը ոչ թէ պարզեցնելու՝ այլ պտուղի մէջ կը կայանայ: «Անոնց պտուղներէն պիտի ճանչնաք զանոնք» կ'ըսէ Տէրը: Շատ աւելի կարեւոր է մեր ինչ ըլլալը, քան թէ ինչ ընելը: Սուրբ Հոգիին գործն է մարդիկ սուրբ ընել, քանզի առանց սրբութեան ոչ ոք կարող է Տէրը տեսնել: Երբ Անսքար, Շուէտի առաջին միսիոնարը,

Շուէտ հասնելով ժողովուրդին ըսաւ թէ ինք մեծ Աստուծոյ իրենց զրկուած էր, անոնք անմիջապէս պատասխանեցին թէ «Մեզի հրաշք մը ցուցուր որ հաւատանք»: Անիկա ըսաւ, «Աստուծոյ օգնութեամբը ձեզի պիտի ցուցնեմ ամենամեծ հրաշքը, սուրբ կեանք մը ապրելու հրաշքը»: Միայն Սուրբ Հոգիին զօրութեամբը կարելի է սուրբ կեանք մը ապրիլ:

Բանախօս մը հարցուց, «Հանդիպած էք երբեք քրիստոնեայի մը որ Քրիստոսանման կեանք մը վարողի մը տպաւորութիւնը ձգած է ձեր վրայ, ահա անոր ձգած ազդեցութիւնը ամենէն մեծ հոգտորին թողած ազդեցութենէն մեծ է: Եթէ մեզմէ իւրաքանչիւրը Պօղոսի նման որոշէր, «Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի փառաւորուի» (Փիլ. Ա. 20), զօրութիւն չունենալնու համար վանգատելէ պիտի դադրէինք: Ամէն մէկ զօրութեամբ լեցուած քրիստոնեայի միակ նըպատակակէտը Քրիստոս ըլլալու է և ոչ թէ ետը:

Այս էր նաեւ այն զօրութիւնը որ կը տեսնուէր Սատու Սունտար Սինկհի վրայ: Բարեկամներէս մին կը գրէր՝ «Սատու Սունտար Սինկհ երբ շաբաթ մեր քով կեցաւ, ես զեռ մէկի մը հանդիպած չէի որ անոր չափ յիշեցնէր ինծի Յիսուս Քրիստոսը»: Եթէ հաւատքին պտուղը կըրենք, կրնանք վստահ ըլլալ թէ Աստուած մեզ պարգեւներով պիտի օժտէ: Արդեօք շիտով է Սուրբ Հոգիին մէկ որոշ պարգեւը փնտռել:

Իմաստութեան խօսք, գիտութեան խօսք, հաւատք, բժշկութեան պարգեւ, հրաշագործութիւն, մարգարէութիւն, հոգիներու ընտրութիւն, զանազան լեզուներ, լեզուներու թարգմանութիւն այս ամէնը միեւնոյն Հոգիին կը ներգործէ, եւ ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ ինչպէս կ'ուզէ, (Ա. Կոր. ԺԲ. 7-11): Ամէն մարդ կրնայ ապահովաբար պարգեւ մը ակնկալել, քանզի Պօղոս առաքեալ Սուրբ Հոգիով գրելով կ'ըսէ, «Ամէն մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրուած է»:

Մենք բոլորս ալ Յիսուս Քրիստոսի մարմինն անդամներն ենք, սակայն մարմինը շատ մը անդամներ ունի եւ բոլոր անդամներուն պաշտօնը նոյնը չէ, հետեւաբար անոնք բոլորն ալ նոյն պարգեւին չեն կարօտիր: Հարկ չկայ որ լեզուն քալել գիտնայ. կամ ձեռքը խօսիլ: Կըրնանք վստահ ըլլալ թէ Աստուած Իր մեզի համար ունեցած ծրագրին համեմատ մեզի զօրութիւն պիտի տայ Իր կամքը կատարելու:

«Աստուած կարող է բոլոր շնորհքները ձեզի առատօրէն տալ, որպէսզի ամէն բանի մէջ, ամէն ատեն բոլոր ձեզի պէտք եղածները ունենա-

լով՝ ամէն բարի գործերով առատանաք» (Բ. Կոր. Թ. 8):

Այս խօսքը մեզմէ ամէն մէկուն բաւական չէ՝ միթէ: Բոլոր անոնցմէ որ զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ ըլլալու կը ջանան՝ կ'աղաչենք որ մասնաւոր պարգեւ մը չընեն իրենց խորհուրդին ու փափաքին առարկան, այլ աչքերնին Քրիստոս Յիսուսի վրայ պահելով՝ Սուրբ Հոգիին թուլատրեն որ Ան իրենց սիրտն ու կեանքը լուսաւորէ եւ ցուցնէ թէ արդեօք իրենք Սուրբ Հոգիին պտուղը կրելու մէջ որեւէ կերպով կը թերանան: Հոգիին պտուղը այս է, սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն (Դադ. Ե. 22): Սուրբ Հոգին այսպէս՝ կը յայտնէ իր ներկայութիւնը: Ոչ մէկը կարող է ինքիւմէ այս բաները ընել: Ոչ մէկը կրնայ ինքզինքը՝ սիրելու, ուրախ ըլլալու, կամ խաղաղութեամբ լեցուելու ստիպել:

Մեր կեանքերուն մէջ Սէր կ'երեւնայ: Մարդկային սէրը մեծ իրականութիւն մըն է, քրիստոնէական սէրը սակայն Աստուծոյ սէրն է որ կը յայտնուի մարդուն սրտին մէջ եւ կ'արտայայտուի մարդկային սրտին միջոցաւ: «Աստուծոյ սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռքով» (Հռով. Ե. 5): Ո՞վ կըրնայ չափել Հօրը սէրը առ իւր Միածին Որդին, Յիսուս Քրիստոս: Այդ սէրն է ահա որ մեզի կը տրուի: Տէրը՝ Հօրը ուղղած իր ազօթքին մէջ կ'ըսէ, «Քու անունդ անոնց ճանչցուցի... որպէսզի այն սէրը որով Դուն զիս սիրեցիր անոնց մէջ ըլլայ ու ես ալ անոնց մէջ» (Յովհ. ԺԷ. 26): Ասիկա անտարակոյս մասնաւոր սէր մըն է, նոյն իսկ իր աշխարհի հանդէպ ունեցած սէրէն աւելի մեծ սէր մը, ծայր աստիճան մեծ սէր մը: Ահա այս սէրն է որ Սուրբ Հոգին մեր սիրտերուն մէջ կը տարածէ եթէ իրեն թոյլ տանք:

Մեր կեանքերը ուրախութեամբ լեցուած են: Քրիստոսի մէջ եղած ուրախութիւնը մեր մէջ կը բնակի՝ եւ մեր ուրախութիւնը լման կ'ընէ՝ (Յովհ. ԺԵ. 11): Ուրախութիւնը առաւելապէս Սուրբ Հոգիին պտուղն է: «Անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով» (Ա. Պետ. Ա. 8): Այս ուրախութիւնն ալ զօրութիւն է. Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրախութիւնով եւ խաղաղութիւնով հաւատալու մէջ, որպէսզի առատանաք Հոգւոյն Սրբոյ զօրութիւնով» (Հռով. ԺԵ. 13): Տէրոջը ուրախութիւնը ձեր զօրութիւնն է, ամբողջն է (Նէեմ. Ը. 10):

Մեր կեանքերը խաղաղութեամբ լեցուած

են: Ամէն միտքէ վեր եղող խաղաղութեամբ: Տէր Յիսուս իր յարութիւն առած օրը աշակերտներուն երկու անգամ «Խաղաղութիւն ձեզի» ըսաւ. յետոյ «Անոնց վրայ փչեց ու ըսաւ անոնց, առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի. 21-22):

Ինծի կը թուի թէ ժամանակի վատնում է Ս. Հոգիին հրաշալի մէկ յայտնութիւնը փնտռել, կամ թէ Սուրբ Հոգիով լեցուելու հետեւէ ըլլալ որչափ ժամանակ որ զԱյն անհոգաբար կը տրտմեցնենք ուրիշներու հանդէպ սիրոյ հակառակ հոգի կրելով, տրտնջելով, գանգատելով ու վրդովուելով: Եկէք բոլոր սրտով պատրաստ ըլլանք Սուրբ Հոգիին թուլատրելու որ իր պտուղին ամբողջ ցանկը մեր մէջ յառաջ բերէ:

Ֆէնթըն Հօլ, 1922ին կոփամարտութեան մէջ առաջին մրցանակը առած էր: Դարձի գալէն վերջ երբ ուրիշ քանի մը անձերու հետ՝ տարեգրլիստ ժողովի մը կ'առաջնորդէր, զիշերուան ժամը 12ին առաջ կոշտ ու կոպիտ մեծ խուժան մը հաւաքուեցաւ դրան առջեւ: Գործիչներէն մէկը յիմարաբար իր ձեռքը դրաւ հայհոյող տղու մը վրայ: Տղան ցատկելով անոր խոչափողէն բռնեց եւ զայն խեղդելու վրայ էր, երբ Ֆէնթըն Հօլ արագ քայլերով դրան մօտեցաւ եւ տղան իր բազուկներուն մէջ առնելով զայն դուրս տարաւ: Տղան բռնեցքի հարուածներ կ'իջեցնէր անոր դէմքին եւ երբ ներսէն մէկը յիմարաբար դուռը Ֆէնթըն Հօլի վրայ գոցեց, անիկա ինքզինքը գտաւ վայրագ խուժանին առջեւ: Բոլորը յարձակեցան անոր վրայ: Թէպէտեւ Ֆէնթըն Հօլի երեսները արդէն գէշ կերպով վնասուած էին զայրացած տղուն հարուածներէն, սակայն անիկա իր բազուկները ծալած, ժպիտը երեսին՝ իր հսկայ հասակով՝ որ վեց ոտք եւ չորս ու կէս մատնաչափ էր, դրան յեցած կեցաւ: Երկար օրեր իր դէմքին վրայ կրեց անոնց առթած վէրքերուն նշանները: Անոր կոփամարտութեան մէջ շահած համբաւը յիշողներէն մին անոր հարցուց թէ, «Ձանոնք բոլորը մէկ կողմ ընելու փափաքը չեկա՞ւ մէջդ»: Անիկա պատասխանեց, «Միտքէս իսկ չանցաւ»: Մինչդեռ առաջ խիստ կրակոտ խառնուածքով մէկն եղած էր: Բայց անոր նպատակը այլեւս զԱստուած փառաւորել էր: Ուրեմն Աստուած կարող էր զայն վերէն զօրութեամբ լեցնել, վատահ ըլլալով թէ իր բնորոշած զօրութիւնը չարաչար պիտի չգործածէր: Սբ. Հոգիին պտուղը բաւական է մարդուն անձնագրապութիւն պարզեցնելու: Ֆէնթըն Հօլ այնքան կատարելապէս յանձնուած էր Քրիստոսի որ խուժանը մէկ կողմ ընելու խորհուրդն անգամ չանցաւ անոր միտքէն:

ՏԱՐԵԼԻՑԻ ԽՈՅՈՒՄՆԵՐ

Ա՛խ...

(Աստուծոյ չնուիրուած ինքնավար հոգին)

Ես մեծ նեղութեան մէջ եմ... ու Աստուած
ինձմէ հեռացաւ, եւ ինձի Թէ՛ մարգարէներու
միջոցով եւ Թէ՛ երազներով պատասխան չտար:

Ա. Թագ ԻԸ 15

Դանիէլ Թագաւորին առջեւ պատասխան
տուաւ ու ըսաւ, Թագաւորին հարցուցած գաղտ-
նիքը՝ իմաստունները, հմայողները, մոգերը ու
բազմ նայողները Թագաւորին յայտնելու կա-
րող չեն, բայց երկինքի մէջ գաղտնիքները յայտ-
նող Աստուած կայ:

Դան, Բ 27, 28

Ա՛խ... Կ'ուզէի լուռ թղթաւել այս պահուն,
Կեանքիս էջերը թաքուն.

Որ կանխայայտ գիտակցութեամբ մը

զինուած...

Ապրիմ վիճակս կնքուած...

Բայց ո՞վ կրնայ պատուել ծածկոյթը

վաղուան,

Որ ես տեսնեմ ապագան.

Կամ թուել ինձ նախագծուած օրերու՝

Պատուհաններն ահարկո՛ւ...

Ոչ ո՛ք. զի ձեռքն Անծանօթին զերիշխան
Հոս կը ծածկէ ամէն բան.

Ու կը մընայ ինձ կոյրի մը պէս հըլու՝

Ապրիլ առանց տեսնելու...

Ա՛խ... զիշեր է: Լո՛ւռ, հոգետանջ ու

մինակ

Կասկածներու բեռին տակ.

Ինչպէ՞ս քալել անառաջնորդ-ինքնավար՝

Գեանուղիին մէջ խաւար...

ԲԱՅՅ...

(Կենսուրախ հաւատացեալը)

Եւ Տէրօջը խօսքը Ամանիի որդւոյն Յովնա-
նի եղաւ ըսելով, ելիք, նինուէ մեծ քաղաք գնա
ու անոր դէմ քարոզութիւն ըրէ, քանզի անոնց
չարութիւնը իմ առջեւս ելաւ: Բայց Յովնան ե-
լաւ որ Տէրօջը երեսէն Թարսիս փախչի:

Յովն. Ա 1-3

Եւ անոնք դէպի Երուսաղէմ կ'ելլէին, ու
Յամբուն մէջ էին, եւ Յիսուս անոնցմէ առաջ կ'եր-
թար, ու անոնք կը զարմանային, ու ետեւէն երթա-
լով կը վախճային:

Մարկ. Ժ, 32

Նոր տարի է: Կ'ուզեմ քալել, բայց ահա
Սիրտըս անզուսպ կը հեւա՛յ...
Ջի առջեւ կը բացուի դուռ մ'այնքա՛ն մութ,
Ուղի մ'այնքան քարքարուտ:

Բայց վարանոտ հողոյս խորքէն կը լըսեմ
Հայրական ձայն մը վսեմ,
— Սիրտդ պնդէ, քալէ յառաջ, զի ԵՍ եմ՝
Որ քու ճամբադ կը գծեմ...

Կ'ուզեմ նաւել. բայց ովկիանոսն անճրազ,
Այնքան խոր է եւ վայրագ...
Որ կը մղուիմ առագաստները հիմոյ
Կայմին փաթթել աւամայ:

Բայց վարանոտ հողոյս խորքէն կը լսեմ
Հայրական ձայն մը վսեմ,
— Քաշէ՛ խարխիսն ու նաւարկէ զի ԵՍ եմ՝
Որ քու ճամբադ կը գծեմ...

Կ'ուզեմ թռչիլ, բայց կը բացուին իմ առջեւ
Հորիզոններ այնքա՛ն սեւ...
Որ թեւերըս յուսալքուն կ'իյնան վար,
Կուրծքիս վրայ դողահար:

Բայց վարանոտ հողոյս խորքէն կը լսեմ
Հայրական ձայն մը վսեմ,
— Թա՛փ տուր թեւիդ, ճախրէ՛ միշտ վեր,
զի ԵՍ եմ

Որ քու ճամբադ կը գծեմ...

X

Հորիզոնդ գորշ ըլլայ կամ լուսաւոր,
Ծովն ալեկոծ կամ հանդարտ.
Ասպարէզդ վերելք մ'ըլլայ փառաւոր
Եւ կամ վայրէջք մը անհարթ,

— Մի՛ վարանիր, զաւա՞կ ես դուն, Ես Հայր եմ՝
Որ քու ճամբադ կը գծեմ...
Խաղաղութեամբ յառաջացիր, զի ահա
Քեզի հետ եմ մինչեւ մահ:

ԱԲՆԵՋԵՐ

(Բոլորանուէր զաւակը)

Այն ատեն Սամուէլ քար մը առաւ եւ Մաս-
փայի ու Սէնի մէջտեղ կանգնեց, ու անոր անունը
Արեւեկը կոչեց, ըսելով, Տէրը մինչեւ այս տեղ
մեզի օգնեց Ա, Թագ, է, 12

Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է,
նեղութիւններու մէջ խիստ օգնական կը գտնուի

ւի: Անոր համար պիտի չվախնանք, Թէն. երկիր
փոխուի ու լեռները ծովուն մէջտեղը ձգուին.
Թէն. անոր ցուրերը գոռան ու պղտորին, լեռնե-
րը դողան անոր ուռենալովը: Սաղ. 109 1-3

Անցեալին մէջ՝ որքա՛ն յաճախ հորիզոններդ
գեղածիծաղ,

Անծայրածիր ասպարէզի պէս արեւշատ,
Ղի՛նջ ու խաղաղ...

Ու թոչեւու գոյգ-գոյգ թեւեր, որ սրարշաւ
ճախրեմ ազատ

Երազներուս եւ իտէալիս վսեմ բարձունքը
հարազատ:

—Այդ օրերուն մէջ Դուն, ո՛վ Տէր, աներեւոյթ
ձեռքով մ'հզօր՝
Որսորդին մութ որոգայթէն պահեցիր զիս
մինչեւ այսօր:

Անցեալին մէջ ճգնաժամի ի՛նչ վայրկեաններ
հոգեսարսուռ...

Վերէն կախուող ի՛նչ ահռելի ամպրոպներ
գորշ եւ շանթակուռ...

Տագնապի ցուրտ, փոշեթաւալ փոթորիկներ
ահազդեցիկ...

Ու դեռ քանի՛ փորձութիւններ... ալեկոծում,
մէգ ու մրրի՛կ...

—Այդ օրերուն մէջ իսկ ո՛վ Տէր, աներեւոյթ
ձեռքով մ'հզօր՝
Առիւծին խուժ ճիրաններէն պահեցիր զիս
մինչեւ այսօր:

Անցեալին մէջ՝ վայրէջքներու հետ ունեցայ
եւ վերելքներ:

Ծաղիկներով լիքը ճամբուն վրայ ներբանս
զգաց փուշեր:

Աչքերուս մէջ տենտուեցան լոյս ու ժպիտ
ցաւ ու արցունք,

Ու ես զիտցայ որ կեանքը հոս՝ թէ՛ դրախտ է
եւ թէ՛ երկունք:

—Ու Դուն, ով Տէր, միշտ հայրօրէն աներեւոյթ
ձեռքով մ'հզօր՝

Անահնկալ անկումներէ պահեցիր զիս
մինչեւ այսօր:

Ու քանի որ մինչեւ այստեղ, Տէր, հայրու-
թիւնը փաստեցիր,

Աստուածային հաւատարիմ գուրգուրանքովդ
անբասիր.

Կը մընայ ինձ՝ որ անկասկած վստահութեամբ
զաւկի նըման

Չեռքերուդ մէջ անցեալին պէս, զնեմ ներ-
կաս եւ ապագան,

Ու մանկական նուիրումով ձեռքս դրած
ձեռքերուդ մէջ,

Ապրիմ կեանքիս կանխադրուած վիճակ-
գիրքը էջ առ էջ...:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօթա

ՄԵՂՔԵՐՈՒ ԹՈՂՈՒԹԻՆ

(H. A. Ironside)

Սուրբ Գրքի համաձայն Քրիստոսի հաւատա-
ցող ամէն մէկ անհատ վստահ է իր բոլոր մեղ-
քերուն թողութեան եւ ան որ այդ վստահութիւ-
նը չունի, չկրնար ճշմարտապէս հաւատացած
ըլլալ:

Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Որով փրկութիւն
ունինք մենք Իր արեանը միջոցով, մեղքի թո-
ղութիւնը՝ Իր շնորհքին ճոխութեանը չափովը»
(Եփես. Ա. 7): Եւ Յովհաննէս Առաքեալ իր խօս-
քը Աստուծոյ ամբողջ ընտանիքին ուղղելով կ'ը-
սէ՝ «Կը գրեմ ձեզի, որդեակներ, վստահի ձեր
մեղքերը թողուած են Անոր անուան համար» (Ա.
Յովհ. Բ. 12): Հաւատացեալը այս խօսքերուն
վստահելով կը հաւատայ Աստուծոյ:

Օր մը երիտասարդ մը ինծի այցելութեան ե-
կաւ: Անոր հարցուցի թէ ինք քրիստոնեա՞յ էր:
«Այո, Dr. C ի մասնաւոր ժողովներուն մէջ իմ
վստահութիւնս Քրիստոսի վրայ դրի եւ հիմա իմ
ջանքս է Անոր ծառայել», պատասխանեց անիկա:
Շատ ուրախ եմ այդ լուրիդ համար. ուստի
գիտես թէ ի՛նչ ըսել է բոլոր մեղքերուդ թողու-
թիւնն ունենալ», ըսի:

«Ոչ, Պարոն, ոչ, այդ կարգի արտայայտու-
թիւն մ'ընելու պիտի չհամարձակէի երբեք. տա-
կաւին քանի մը շաբաթ առաջ դարձի եկայ եւ
դեռ չեմ զգար թէ թողութիւն ստացած եմ, սա-
կայն կը յուսամ կարճ ժամանակէն զայն ընդու-
նիլ», բացազանչեց երիտասարդը:

«Ներում ստանալէդ վերջը ինչպէ՞ս կը խոր-
հիս թէ գիտակից պիտի ըլլաս զայն ստացած
ըլլալուդ», հարցուցի:

Այդ մասին որոշ գաղափար մը չունիմ, Պա-
րոն, սակայն Սուրբ Գիրքը կ'ըսէ թէ Սուրբ Հո-
գիին վկայութեամբ պիտի կարենանք գիտնալ
թէպէտեւ ամէն օր կը փնտռեմ ես այդ վկայու-
թիւնը, բայց տակաւին անոր հասած չեմ», պա-
տասխանեց:

«Եթէ իրապէս Քրիստոսի հաւատալով զԱնիկա Փրկիչդ ըրած ես, եւ վստահ ես թէ Անքու տեղդ մեռաւ, Սուրբ Հոգիին վկայութիւնը արդէն ունիս», պատասխանեցի իրեն:

Շփոթած ինծի նայելով՝ ըսաւ՝ «Ձեր ըսածը չեմ հասկնար: Աստուծոյ վրայ երբեք չեմ կասկածիր, սակայն Սուրբ Հոգիին վկայութիւնը չեմ զգար իմ մէջս»: Ըսի «զգալ» բառը քրիստոնեաներու համար երբեք գործածուած չէ Սուրբ Գրքին մէջ: Քրիստոնեային բառը «Հաւատք» եւ «Հաւատալ» է: Զգալով չէ որ մենք կը գիտնանք, այլ Աստուծոյ հաւատալով:

Երիտասարդին հետաքրքրութիւնը շարժեցաւ եւ ես առանձնաշնորհուեցայ թողութեան ճշմարտութիւնը անոր պարզել եւ անիկա իր մեղքերուն թողութեան գիտակցութիւնը ստանալով՝ ուրախութեամբ ինձմէ բաժնուեցաւ:

Սուրբ Գիրքը կը խօսի Սուրբ Հոգիին մեղի եւ մեր մէջ ըրած վկայութեան մասին: Անիկա նախ կը վկայէ մեղի եւ յետոյ մեր մէջը: Այս ճշմարտութիւնը խիստ կարեւոր է եւ կ'արժէ ուշադրութիւն դարձնել այս կէտին:

Բացէք Եբր. Ժ. գլուխը: Առաջին 14 համարներուն մէջ աչքառու տարբերութիւն մը կը տեսնենք օրէնքին տակ եղած ժամանակաւոր ու յաճախ կրկնուած զոհաբերութեանց եւ Տէր Յիսուս Քրիստոսի մի անգամ ընդ միշտ կատարած զոհին մէջտեղ: Յիսուսի մարմնով եղած զոհը կրկնուելու պէտք չունի երբեք, քանզի անիկա բաւական է իւրաքանչիւր հաւատացեալի բոլոր մեղքերը կատարելապէս քաւելու: ԶԱստուած պաշտողները իրենց ոտքերը այս հիման վրայ գնելով իրենց մեղքերէն կ'ազատին: Քրիստոս հիմա Աստուծոյ աջ կողմը նստած է, որովհետեւ թողութեան գործը գլուխ հանեց: «Մէկ պատարագով մշտնջենապէս կատարեց սրբուածները»:

Այսինքն յաւիտենապէս եւ կատարելապէս կը փրկէ զանոնք որ իրեն ու իր արեան հաւատալով Աստուծոյն ըլլալու համար ընտրուած են: Ի՞նչ փառաւոր հետեւանքներ ունի այս իրողութիւնը: «Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կուտայ»: Ի՞նչ բանի վկայութիւն կուտայ: Անիկա նախ կը վկայէ նոր ծնունդի համար: «Իմ օրէնքներս անոնց սրտին մէջ պիտի դրնեմ, ու անոնց միտքին մէջ պիտի գրեմ զանոնք»: Ամէն հաւատացեալի մէջ նոր ընտրութիւն մը կը սերմանուի, նոր փափաքներով ու կարօտներով: Յետոյ կը վկայէ՝ «Անոնց մեղքերը եւ անոնց անօրէնութիւնները ալ պիտի չիղջեմ»:

Այսպէս Սուրբ Հոգին կատարեալ փրկութեան մը համար վկայութիւն կուտայ:

Այս վկայութիւնը կը գտնենք Սբ. Գիրքին մէջ՝ Սուրբ Հոգիին ներշնչմամբ գրուած: Եթէ այսպէս կը հաւատաս, գիտես թէ մեղքերու թողութիւն ունիս, քանզի Աստուած կ'ըսէ թէ քու վստահութիւնդ Քրիստոսի վրայ գնելով մեղաց թողութիւն կ'ստանաս:

Սակայն ի՞նչ է Սուրբ Հոգիին մեր մէջ ըրած վկայութիւնը: Անոր խօսքին մեզի ըրած վկայութեանը հաւատալով՝ կ'ունենանք Անոր վկայութիւնը մեր մէջ, քանզի մեր մէջ ընդունուած Աստուծոյ խօսքը ինքնին է վկայութիւնը:

Կարդա՛նաւ Ա. Յով. Ե. 1-13: Զգուշութեամբ կշռէ ամէն մէկ բա՛ռ, սակայն մասնաւոր ուշադրութիւն ընծայէ 10րդ համարին՝ «Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ, վկայութիւնը իր մէջ ունի»: Անոր հետ բաղդատէ Վրդ համարը՝ «Եւ վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը Անոր Որդւոյն մէջ է»: Ահա Աստուծոյ խօսքին անփոփոխ վկայութիւնը: Սուրբ Հոգիին վկայութիւնը իմ մէջս զգացուելիք երջանիկ զգացում մը չէ, այլ Քրիստոսի կատարած գործին եւ անով յառաջ եկած արդիւնքին արձանագրութիւնը Աստուծոյ խօսքին մէջ:

Անոր այս արձանագրութեան հաւատալով՝ վկայութիւնը իմ էութեանս մէջ կը գտնեմ եւ այն ատեն «նոյն ինքն Հոգին վկայութիւն կուտայ մեր Հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք» (Հռով. Ը. 16): Այսինքն Աստուծոյ վկայութիւնը որ Սուրբ Հոգիին գործութեամբ ինծի կը տրուի, եւ իմ Աստուծոյ խօսքին վրայ ունեցած անձնական հաւատքս՝ իրարու կը համաձայնին: Ես կը գիտնամ թէ Աստուծոյ զաւակն եմ: Աստուծոյ բոլոր զաւակներուն մեղքերը ներուած են, հետեւաբար իմ ալ մեղքերս ներուած են:

Մեղքերու այս թողութիւնը յաւիտենական բաժինն է բոլոր անոնց որ իրենց հոգիներուն հանգիստը Քրիստոսի մէջ գտած են:



ՄԵՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ*

Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութիւնով կը ցնծեն. ան որ լալով կ'երթայ, ցանելու սերմը տանելով, անշուշտ ցնծութիւնով ետ պիտի դառնայ, իր խուրձերը բերելով:

Սաղ. ձեռ. 5, 6

Եթէ մեռնի, շատ արդիւնք կը բերէ:

Յովհ. փ. 24

Մեր գործը կրնայ նկատուիլ գծութեան գործ: Եւ իրաւամբ. քանզի հակառակ հայերու վրայ ի գործ դրուած բոլոր անգութ արարքներու եւ հայերու դէմ խօսուած բոլոր անգութ խօսքերու մէնք կը փափաքինք հետեւիլ Անոր հեռքերուն Որ կը խղճար անոնց վրայ, որոնք «Յողմած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս»: Եւ մենք կ'ուրախանանք անոնց վերայ, որոնք մեր գործին ետեւը կը կենան իբր Բարի Սամարացիներ եւ Քահանային ու Ղեկաւորացիին նման անտարբեր սրտով չեն անցնիր աւազակներու ձեռքը իյնողին քովէն:

Մեր գործը կարելի է կոչել նաեւ քրիստոնէական համերաշխութեան գործ: «Եթէ մէկ անդամը նեղութիւն կը կրէ, բոլոր անդամները կը նեղուին անոր հետ»: Մենք Եւրոպացի քրիստոնէաներս կրնայինք լքել հալածեալ եղբայր ժողովուրդ մը: Կրնայինք մենք քանդուած վիճակի մէջ ձգել քոյր եկեղեցի մը, որ սոսկալի աղէտներով աւերուած է:

Բայց այս ամենէն աւելի A. C. O. միախառնարական ու աւետարանական միութիւն մըն է: Ոչ թէ միայն մարմինն ցաւը մեղմացնել կ'ուզենք, հապա հոգիներու ծառայել. ոչ թէ միայն մարդոց օգնել, հապա նաեւ Քրիստոս փառաւորել: Երբ մեր օգնութիւնը կ'ընենք, կը փափաքինք որ Արեւելքի մէջ խաչը եւ Աստուծոյ թագաւորութեան Աւետարանը քարոզուին: Որքան յաղթանակէ Աւետարանը, այնքան անբռնական կը դառնան քրիստոնէից հալածանքին նման ոճիրները: Ասկէ զատ՝ մոռնալու չենք թէ

.....

* Այս յօդուածը թարգմանուած է Le Levant կոչուած պարբերաթերթէն, որ օրկանն է Action Chrétienne en Orient ի, այն ալգասական միութեան, որ տասը տարի է ի վեր Տէրջը շնորհքով Սուրիոյ եւ Ֆրանսայի մէջ շատ կարեւոր ծառայութիւններ կը մատուցանէ հայ աւետարանականներու: Յօդուածը գրուած է միսիոնարութեան տնօրէն Տր. Պէրրօնի կողմէ:

այդ երկիրներուն մէջ ժամանակաւ քրիստոնէայ եկեղեցիներ կը ծաղկէին. մահմետականութիւնը ընկճեց զանոնք: Ինչ որ Միջին դարու խաչակիրները ձեռք ձգել կ'ուզէին սխալ միջոցներով, աշխարհիկ զէնքերով, հարկ է այսօր նոյն նպատակին ձգտիլ Հոգւոյն զէնքերով: Այսինքն շատաւ է Քրիստոսի համար Արեւելքը զրաւել միսիոնարութիւնով:

Այս է մեր ստացած յանձնառութիւնը. մենք զիտակից ենք որ այս աստուածային յանձնառութիւն մըն է: Սրտանց շնորհակալ ենք այն ամենուն, որոնք կ'ըմբռնեն զայս եւ մեզի կ'օգնեն՝ կատարելու այս յանձնառութիւնը: Ուրիշ կողմէ մըն ալ լուսաբանենք ու ճշդենք այս յանձնառութիւնը, մեր միսիոնարութեան հիմնարկութեան այս տասնամեակին առթիւ...:

Եթէ ցորենի հասիկը մեռնի, շատ պտուղ կը բերէ: Յիսուսի մահը կ'ապացուցանէ այս խօսքին ճշմարտութիւնը: Իր մահէն յառաջ դալիք պտուղին վրայ աշխարհ մը նետելով՝ Ան կը զօրանար քալելու դէպի խաչ, քանզի զիտէր թէ այդ ճամբայէն քալելը ապարդիւն չէր:

Հայ ժողովուրդին, ինչպէս նաեւ Արեւելքի բոլոր քրիստոնէաներուն վրայէն ահարկու մահ մը անցաւ: Արցունքներու սերմը, այո, գրեթէ անմահ արեան սերմը ցանուեցաւ: Ո՞վ կարող է թափուած արցունքը եւ հոսած արիւնը չափել: Հիմա այս է կարեւոր հարցումը. — ապարդիւն մնալու է այս ամէնը, թէ այդ սոսկալի սերմէն ուրախառիթ հունձք մը յառաջ դալու է: Պէտք է որ Արեւելքի քրիստոնէաներու մահէն պտուղ, շատ պտուղ աճի, եթէ ոչ այս սարսափելի պատահարը անիմաստ եւ յուսահատեցուցիչ է: Եւ պտուղը յառաջ պիտի դայ: Այս յոյսը մեզի կը ներշնչեն աստուածային գործառնութեան օրէնքը եւ Յիսուսի ու Անոր թագաւորութեան պատմութեան մէջ Աստուծոյ գործելակերպը: Այդ թագաւորութեան ճամբան միշտ ընթացած է աւերման ու մահուան մէջէն դէպի կեանք, պտուղ եւ յաղթանակ: Նաեւ Արեւելքի քրիստոնէաներու եւ քրիստոնէութեան հարցին նկատմամբ կրնանք նոյնը սպասել:

Բայց մենք մարդիկս ինքզինքնիս Աստուծոյ տրամադրութեան տակ դնելու ենք, որպէս զի Ան կարենայ իրազործել իր նպատակները: Մենք կը փափաքինք զայս ընել: Մենք կը հաւատանք թէ հակառակ մեր բոլոր տգիտութեան ու տկարութեան՝ կրնանք Աստուծոյ քչիկ մը ձեռնտու ըլլալ. կը հաւատանք թէ մենք կոչումն ունինք՝ գործակցելու, որպէսզի Արեւելքի մէջ աւելի ունեցած

սոսկալի մահէն՝ աւելի եւ շատ աւելի պտուղ ա-
ծի: Որքան մեծ զժրագողութիւն, եթէ այս պտու-
ղը յառաջ չգայ, քանզի թէեւ Աստուած կը փա-
փաքէր զայն շնորհել, բայց մենք մարդիկս թե-
րացանք ու պարտազանց եղանք:

Շօշափելի իրողութիւն մըն է թէ Աստուած
ետեւէ է այդպիսի պտուղներ յառաջ բերելու: Ա-
տոր վկայ են փորձուած ու տառապանքի մէջ
գտուած քրիստոնեաները, զորս Աստուած Իրեն
համար հայ փախստականներէն պահած է Սուր-
իոյ, Ֆրանսայի եւ ուրիշ տեղերու մէջ: Նոյնիսկ
անոնց հաւատոյ խոր կեանքը մէկ պտուղն է ա-
նոնց ցաւին: Անոնք «Լալով կ'երթան՝ ցանելու
սերմը տանելով»: Անշուշտ ատկէ դեռ շատ պը-
տուղներ յառաջ պիտի գան: Այդ նպատակին
համար Աստուած այս քրիստոնեաները ազատած
է շատ մը արտաքին ու ներքին զժուարութիւն-
ներու մէջէն: Անոնք դեռ պարտականութիւն մը
ունին թէ՛ իրենց ազգակիցներուն եւ թէ Արեւել-
քի ուրիշ ժողովուրդներուն, ինչպէս նաեւ մուսա-
մետականներուն: Միշտ հարցուած է, ի՞նչ մեծ
կարեւորութիւն ունի քրիստոնէական եկեղեցի-
ներու զոյութիւնը՝ մուսամետական աշխարհի մէջ:
Արդ՝ այդ եկեղեցիները կան, եւ նման են պայ-
ծառ լոյսերու, որոնք կը լուսաւորեն խաւարի
մէջ եւ Քրիստոսի համար կը վկայեն:

Մենք իբր միսիոնարութիւն՝ յառաջ բերած
չենք այդ եկեղեցիները: Աստուած անձամբ ը-
րած է զայդ Իր խօսքովը, զոր մեր հայ հաւա-
տակիցները ունին առանց մեր ջանքին: Բայց
մենք կրնանք օգնել նախ՝ նիւթական միջոցնե-
րով որպէսզի անոնք յաջողութեամբ անցնին
արտաքին նեղութիւններուն մէջէն, ռժմնք հիմա
ալ դեռ շատ են, եւ երկրորդ, կրնանք զանոնք
ներքնապէս զօրացնել թէ՛ եղբայրական սիրով
եւ թէ՛ մեր հոգեւոր ծառայութիւնով, որ կարող է
անոնց հոգեւոր կեանքը զօրացնել եւ ճշմարտել:
Մեր ընթերցողները արդէն նկատած են որ մենք
ալ մեր հաւատքին մէջ կը զօրանանք եւ կ'ա-
ռատանանք անոնց հաւատքին միջոցաւ:

Այսու հանգերձ այս կենդանի հաւատացեալ-
ներու խմբակները՝ կ'ազդեն ոչ թէ միայն իրենց
զոյութիւնովն ու օրինակովը, հապա նաեւ իրենց
եռանդուն գործունէութիւնովը: Չայս պիտէ ովոր
անոնց մէջ ապրած է: Համեմատաբար մեծ է
այնպիսիներու թիւը, որոնք վկայելու և Աստու-
ծոյ խօսքը քարոզելու համար թէ՛ ընդունակ են
եւ թէ յօժարակամ: Եւ այս յօժարակամութիւնը
կ'երկարի նաեւ զէպի մուսամետականները, ա-
նոնք կ'ուզեն անոնց ալ Աւետարան քարոզել:

Կը թուի թէ այլեւս ժամանակը անցած է, երբ
մարդ պարտական էր Արեւելքի քրիստոնեանե-
րը պախարակել թէ՛ անոնք պակաս էին հո-
գեւոր կեանքի եւ միսիոնարական ոգւոյն մէջ:
Ոեւէ ատենէ աւելի հիմա այդպիսի միսիոնա-
րական ոգի մը արթնցած է եւ այս մէկ պտուղն
է տառապանքին, ուրկէ անցած են Արեւելքի
քրիստոնեաները:

Այս կէտ մըն է, ուրկէ կրնայ ու պարտաւոր է
սկսիլ միսիոնարութիւնը: Ան կոչուած է վկայելու
համար արթնցած այս փափաքէն օգտուել, որ-
պէսզի շատ պտուղ յառաջ գայ: Պէտք է գտնել
ու քաջալերել այդպիսի փափաք ունեցողները,
անոնք ազատուելու են նիւթական հոգիէ, անոնց
օգնելու է արտաքնապէս և ներքնապէս: Մուսա-
մետականաց մօտենալու մասնաւոր պարգեւը որ
անոնց սեփական է, պէտք է կըլծուի իմաստուն
ղեկավարութեամբ եւ այն ծանօթութիւններովն
ու արժէքաւոր փորձառութիւններովը, զորս ու-
րիշներ ձեռք ձգած են նոյն կամ ուրիշ միսիո-
նարական դաշտերու մէջ: Միսիոնարութիւնը
կրնայ օգնել, որպէսզի այդ կըլծութիւնը, այդ
կապակցութիւնն ու փոխանակութիւնը, զործի
ծրապրումը բաժանումը եւ հոգեւոր մշակներու
իմաստուն կերպով գետնադմը, ինչպէս նաեւ
նիւթական անհրաժեշտ միջոցներու հայթայթու-
մը լաւագոյն կերպով տեղի ունենան: Միսիոնա-
րութիւնը կրնայ արեւելեան քրիստոնեաներու
ծառայութիւնը ամբողջացնել նաեւ ուրիշ կեր-
պերով, մասնաւոր սեփական միսիոնարներով՝
համաձայն այն պարզեւնիւնուն որոնք մեզի ա-
րեւմտեան քրիստոնեաներուս տրուած են: Առով
կը լուսարանուի առանց այլեւայլի թէ ինչ մեծ
օրհնութիւն եւ որքա՞ն առատ պտուղ կրնան յա-
ռաջ գալ այդպիսի գործակցութենէ մը:

Թող թուլատրուի մեզի բաղդատառնութիւն մը
ընել «Եղբայրական միութեան» միսիոնարութեան
հետ, որուն 200 ամեայ յորելեանը տօնուցաւ
քիչ առաջ: Միսիոնարութիւնը յառաջ եկաւ ոչ
թէ այն ատենուան մեծ եկեղեցիներէն, հա-
պա մօրավիան եղբայրներու պարզուկ խմբա-
կէն(1): Փախստականներու փոքր համայնքը՝
Հերնհոլթի մէջ՝ առաջին միսիոնարական եկե-
ղեցին եղաւ: Ասիկա պատահար մը չէր, քանզի
այս խոր ու զօրաւոր հաւատքի տէր մարդիկը,
որոնք Աւետարանի սիրոյն համար իրենց հայ-
րենիքը լքած էին, վարժուած էին Քրիստոսի

(1) Տե՛ս «Բանբեր»՝ Նոյեմբեր 1932 թուոյն մէջ
Ցինցէնտորֆը:

սիրոյն համար զոհողութիւն եւ զրկանք կրելու: Բայց պակաս կարեւոր չէր նաեւ որ այս եղբայրները կոմս Յինցէնտորֆէ առաջնորդուեցան: Անոնք անոր մէջ գտան իրենց մտաւոր եւ հոգեւոր ղեկավարը, որ իրենց ճամբայ ցուցուց եւ զիստացաւ իրենց պարզեւնեւոր պտղաբեր ընել: Եւ իր կողմէն ինքն ալ անոնց մէջ գտաւ գործիքները, ի գործ զնելու այն միսիոնարական խորհուրդը, զոր Արտուած իր մտքին մէջ դրած էր:

Այժմ խորհինք մուհամետական միսիոնարութեան վրայ, որուն ստիպողականութիւնը այսօր այնքա՛ն կը շեշտուի: Արդեօք Աստուած հայ փախստական համայնքներուն ալ նոյնպիսի պարտականութիւն մը տուած չէ՞, ինչպէս այն ատեն այն հայրենազուրկ մորավեան եղբայրներուն: Արդեօք հայ քրիստոնեաները մասնաւոր կերպով պատրաստուած մշակներ չպիտի՞ ընծայեն մուհամետական միսիոնարութեան համար: Արդեօք չպիտի՞ պատահի որ Սուրբայի, Ֆրանսայի, Ամերիկայի եւ Յունաստանի հայ գաղթական համայնքներէն օրէ օր աւելի միսիոնարներ ելլեն, երթալու Աւետարան քարոզելու իրենց նախկին թշնամիներուն. — թուրքերու, քիւրտերու, աւարներու, չէրքէզներու, տիւրքիներու, ալէվիներու եւնի մէջ: Մեծ է հունձքի դաշտը, եւ փառաւոր՝ հունձքը, զոր պէտք է ներս առնել:

Եւ արդեօք միսիոնարութեան, — մերինին ալ որ սկիզբէն ի վեր ղէպի մուհամետականները կը մղուի, — տրուած չէ՞ նման կոչում մը, ինչպէս ատենօք Յինցէնտորֆի: Ա. Շ. Օ. ն մինչեւ հիւսկ կոչին մէկ մասը ըմբռնած է եւ իր բոլոր ուժերովը հալածեալ եղբայրներու օգնութեան ձեռք կարկառած: Իր պարտականութեան երկրորդ մասը չպիտի՞ ըլլայ՝ միւս այդ եղբայրներուն հետ, միասնաբար մեծ պարտականութեան մօտենալ եւ մուհամետականաց Բրիտանոնք քարոզել:

Մենք կը հաւատանք իրապէս թէ մեր կոչումը ղէպի այդ կոչումը կը հակի: Ոչ թէ մենք կը կարծենք թէ մենք մեծ ու մասնաւոր գործերու կանչուած ենք: Ատկէ աւելի պարզ ու անփառունակ ծառայութեան մը հետ գործ ունինք: Մեր պարտականութիւնն է միայն հնազանդիլ եւ ինքզինքնիս Աստուծոյ տրամադրութեան տակ զնել: Մնացեալը միսիոնարութեան Տէրը կը պատկանի:

Անմահ զօրագոյնութեան եւ թշուառութեան ենթարկուեցան Արեւելքի քրիստոնեաները: Բայց ասոնքի պիտի ըլլայ աղէտը, եթէ այս ամէնը ի գուր անցնի, եթէ անպտուղ մնայ Դժբաղդու-

թիւնն ալ տանելի է, երբ անկէ ոեւէ պտուղ, ոեւէ բժշկութիւն յառաջ կուգայ: Այո, կրնայ նոյնիսկ պատահիլ որ մենք հիացմամբ երկըրպագենք Աստուծոյ որ կրնայ աւերակաց վերայ հաստատել Իր թագաւորութիւնը: Նաեւ արիւնով ողողուած Արեւելքի համար արտօնեալ ենք նոյնը յուսալ:

Աւելի ցնցիչ է այն դադափարը թէ այս ուրախառիթ հունձքը կրնայ փճանալ: Նախ հայ քրիստոնեաներու յանցանքովը, եթէ անոնք իրենց պարտականութիւնը չըմբռնեն բաւականաչափ, կամ եթէ իրենց սպառնացող վտանգէն պարտուին եւ հաւատքի երկրորդական խնդիրներու պատճառաւ պառակտին ու տկարանան. այո, նոյնիսկ մոռնան իրենց կոչումը աշխարհի մէջ: Կրնայ փճանալ նաեւ միսիոնարութեան յանցանքովը, եթէ մենք մեր առջեւ դրուած պարտականութեան հանդէպ կենանք իբր անմիտներ կամ ծոյլեր, եթէ յօժար չենք հարկ եղած զոհողութիւնն ընելու եւ կամ թէ անյարմար գործիքներ ենք անհաւատութեան ու մեղքի պատճառաւ: Աստուած մեզ հեռու պահէ ատկէ:

Մեր բարեկամները տասը տարի մեր գործը իրենց սրտերուն մէջ կրած են ջերմօրէն: Մենք վստահ ենք թէ ասկէ ետքն ալ սրտազին հասկըցողութիւն պիտի ունենան մեր գործին ու ամբողջ կոչումին նկատմամբ, զոր Աստուած տրուած է մեզի:

Տր. Փ. ՊԷՐՐՈՆ

ԵՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՕՏԱՐ ԱՓՈՒՆՔԷ

Ծնած եմ 1900 ին Ֆրանսական Սուտանի Սօքոյօ կոչուած պզտիկ քաղաքին մէջ: Հայրս Ֆրանսական բանակին մէջ սպահի (spahi) էր: Մայրը՝ հաւատարիմ մահմետական մը որ Աստուծոյ կը վախնար: Իսկ ես ծնողացս կրօնքին կը հետեւէի առանց անձնական համոզման, ինչպէս կրօնակիցներէս շատերը:

Հօրս մահէն յետոյ Սէկու գացի, ուր սկսայ կաթոլիկ տէրտէրներուն այցելել: Հոն ալ բան մը չէի հասկնար: Օր մը երբ եկեղեցիէն կ'ելլէի, ընկեր մը ինծի ըսաւ, «Ան որ այս տունը կը մըտնէ երբեք Մուհամէտ մարգարէն պիտի չտեսնէ»: Մեր կրկրի իսլամներուն ընդհանուր գաղափարն է թէ՛ վերջին դատաստանին օրը Մուհամէտը պիտի կանգնի իբր իր պաշտպան փաստաբանը: Ընկերոջս խօսքին համոզուելով կաթոլիկ տէրտէրները թողըցի եւ իմ մահմետական պաշտա-

մուկներն ընդհանուր շարունակեցին՝ օրական հինգ անգամ նամակ ընկելով և ամենօրեայ արաբերէն աղօթքները կրկնելով՝ սակայն առանց զանոնք հասկընալու:

Միեւնոյն ատեն գինի եւ աօլօ (կորեակէ գարեջուր) կը խմէի տեղական գինեւորաններուն մէջ, եւ ամէն տեսակ մեղքեր կը գործէի: Կրօնական համոզումներս շատ հարեւանցի էին, եւ մեղքին ոյժը մէջս աւելի զօրաւոր էր քան կրօնական սկզբունքները: Այսպէս էին նաեւ ընկերներու մեծ մասը. անոնցմէ շատեր կ'ըսէին, «Մեր ուղածին չափ մեղք կրնանք գործել, քանի որ աղօթելով եւ րամսզանի 30 օրերը ծով պահելով կը քաւուին»:

Այս խորհուրդներով դեկավարուած՝ կամաց կամաց մեծ գինեմուլ մը դարձայ: Պամաքօ երթալու՝ անմիջապէս իբր յաճախորդ ճանչցուեցայ քաղաքին գինեւորաններուն: Յաճախ ընկերներով կայարանի պիւլիէն կ'երթայինք եւ երբեմն ալ աղմուկ կը հանէինք:

Երեկոյ մը բարեկամիս հետ՝ սինեմային դուռը կեցած պահուստ՝ սեւամորթ երիտասարդ մը տեսայ որ խառնածինի մը հետ կը վիճաբանէր քրիստոնէական կրօնքին վրայով: Եւ շատ զարմացայ, քանզի առաջին անգամս ըլլալով ֆրանսերէն լեզուով՝ Աստուած, հրեշտակներ, Սատանայ բռները կը լսէի. կը կարծէի թէ բոլոր եւրոպացիները անաստուածներ են: Ընկերոջս առաջարկեցի որ մօտենանք աւելի լաւ լսելու համար: Ինքը չուզեց, եւ մեկնեցաւ. իսկ ես մինչեւ վերջը ուշի ուշով մօտիկ ըրի: Երիտասարդ սեւամորթին այնքան հաւատքով խօսիլը ինծի ազդած էր: Ինքն ալ արդէն զիս նկատած էր եւ մօտենալով հարցուց թէ լսած բաներս զիս հետաքրքրած էին: Ինծի մեղքերու եւ Յիսուս Քրիստոս Փրկչին վրայով խօսեցաւ. յետոյ տուն տանելով ինծի «l'Appel» վերնագրով թերթիկ մը առաւ: Շատ ուրախութեամբ տուն դարձայ եւ սկզբայ թերթիկը բարեկամիս կարգաւ: Անիկա ըսաւ, «Պատուէ այս թուղթը. ասոնք ամերիկացիներուն խօսքերն են»: (Հոս քրիստոնէականները ամերիկացիներ կը կոչուին, որովհետեւ առաջին անգամ ամերիկացիները բերին՝ մեղի Աւետարանը): Բարեկամիս մօտիկ բնակով թերթիկը պատռեցի:

1923 ին ուրիշ շատ մը անառակ ընկերներու հետ միասին իբր ծովային գինեւոր արձանագրութեցայ: Տուրք մեկնելիք օրը բարեկամիս՝ Սիտիպէին հետ 6 շիշ գինի զնեցինք: Կայարանը շատ աղմուկ հանեցինք, կայարանապետը նա-

խատեցի եւ այսպիսի զրգոտած վիճակի մը մէջ մինչեւ Տաքար ճամբորդեցինք:

Երկու ամսուան մարզանքէ յետոյ՝ կազմաւորութեան բաժնի մատանը զրկուեցայ: Այս դիւքը զործիս շատ կուգար, որովհետեւ գինիի տակառները ձեռքիս տակ էին: Գրեթէ ամէն երեկոյ արթած անկողին կը մտնէի: Քանի մը ամիս յետոյ իբր օգնական զրուեցայ նաւահանգիստի տնօրէնութեան: Հոն ալ սպաները գինիի շիշերուն յատակը ինծի կը թողուին:

Անգամ մը գիշերը առանց լոյսի հեծելանիւով ճամբորդելուս համար ոստիկանները զիս բռնեցին. անոնց սպանալիք ըրի. ուստի 10 օր բանտարկուեցայ: Ուրիշ անգամ մը գինեւորական տափատ մը ձեւափոխելուս համար 30 օր բանտարկուեցայ. յետոյ նաւատորմին տուն գէշ խմբատներ տուած ըլլալուս համար 45 օր բանտարկուեցայ: Խորհելով թէ զիս անիրաւ տեղը կը պատժէին՝ երթալով աւելի եւ աւելի գէշ կ'ըլլայի: Վերջապէս զիս իբր անուղղայ վճռեցին:

Չուզելով որեւէ մէկուն հրամանին տակ ըլլալ՝ արհեստ մը սորվելու համար գերձակի մը քով աշկերտ եղայ: Վարպետս անունով քրիստոնէայ էր: Օր մը չորս տարի առաջ ինծի l'Appel թերթիկը տուող սեւամորթ երիտասարդը եկաւ ձեռք մը հագուստ կարել տալու: Եւ զինքը ճանչցայ՝ եւ անմիջապէս բոլոր ինծի ըսածները միտքս ինկան: Այն օրէն սկսեալ Աստուած սկսաւ իմ մէջս զործել: Այն երիտասարդը ինծի պատմեց անառակ որդիին պատմութիւնը. եւ հասկցայ որ կերպով մը այս իմ անձնական պատմութիւնս էր: Օր մը ուրիշ քրիստոնէայ գերձակ մը մեր խանութը եկաւ եւ սեղանին վերայ Ս. Գիրք մը տեսնելով առաւ ու Յիսուս Քրիստոսի յարութեան պատմութիւնը կարդաց. յետոյ ըսաւ թէ միայն Յիսուս Քրիստոսով կարելի է փրկուիլ եւ թէ առանց Աստուծոյ մէկը չկրնար երկինք երթալ: Ինձ վստահացուց թէ Տէր Յիսուս մահուան յաղթած է՝ եւ միայն Ինք կարող է մեղաւորը փրկել: Յետոյ ըսաւ, «Մահա մէտ բան մը ընելու կարող չէ, անիկա մեռած է եւ զերեզմանին մէջ կը մնայ: Մինչդեռ Տէր Յիսուս Քրիստոս կենդանի է, յարութիւն առած՝ եւ Աստուծոյ աջ կողմն է»: Այն օր վարպետիս ըսի թէ կը փափարիմ Ս. Գիրք մը ունենալ: Անիկա զիս Աւետարանական միսիոնարութեան տարաւոր կրցայ Սուրբ Գիրք մը առնել: Տուն դառնալու սկսայ Մատթէոսի Աւետարանը կարդալ: Այնչափ հետաքրքրական էր ինծի համար որ գիշերը մինչեւ լոյս կարդացի: Յաջորդ օրը վար-

պետիս հարցուցի թէ կարդացածներս ճշմարիտ էին: Երբ զիս վստահացուց թէ Ս. Գիրքը ճշմարտապէս Աստուծոյ խօսքն է, աւելի քաջալերուեցայ կարդալու: Քանի կը կարդայի բան մը զիս կը դարմանէր. կը տեսնէի թէ վարպետս և միւս գերձակը որոնք քրիստոնէական կրօնքը կը դաւանէին, կեանքով եւ վարքով շատ հեռու էին Աստուծոյ խօսքին պատուիրանքներուն յարմարելէ:

Երիտասարդ սեւամորթը, Տէմպա Տաու ինձ քանի մը այցելութիւններ ըրաւ եւ տեսնելով թէ Աստուծոյ խօսքով կը հետաքրքրուէի, ամէն շաբաթ օր կուգար՝ զայն հետս կարդալու: Ինձ սորվեցուց նաեւ որ ես ինքս ալ ազօթէի. ես ալ ըսկըսայ վարպետիս հետ աղօթել: Ամէն երեկոյ պառկելէ առաջ կը խնդրէի զիս ամէն մեղքէ պահել, և զօրութիւն ստացայ զէջ ընկերներէ ետ քաշուելու: Ասկէ յետոյ վարպետիս հետ դժուարութիւններ ունեցայ՝ որովհետեւ անիկա իմ ուրախութեանս մասնակից չէր: Օր մը նախկին աւանակ ընկերներէս շատեր եկան եւ զիս հրաւիրեցին երթալ հետերնին խմելու. քանի մը շիշ ըմպելիք ցուցուցին ըսելով թէ ինձի համար ծախու առած էին: Բայց երբ տեսան թէ կտրուկ կերպով մերժեցի, սկսան ամէնն ալ խնդալ եւ զիս ծաղրել:

Ես կը շարունակէի երթալ ժողովներու, ուր Սբ. Գիրքը կը կարդացուէր: Երթալով աւելի կը հասկնայի թէ Տէրը որչափ շատ սիրած է զիս, թշուառ մեղաւորս: Ուստի ճշմարտապէս ապաշխարեցի, հաւատացի թէ Յիսուս Քրիստոս իմ մեղքերս քակելու համար մեռած է եւ զիս արդարացնելու համար յարութիւն առած. և 1927 Յունուար 7ին մկրտուեցայ:

Ստիպուեցայ վարպետէս բաժնուիլ եւ զացի վաճառատան մը մէջ աշխատելու: Կեանքս բոլորովին փոխուած էր իմ Փրկչիս Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքով: Ալքօլի, ծխախոտի, քօլայի (ըմպելի) մոլութիւններէս ազատուած էի: Պետրոս առաքեալի ըսածին նման «Աշխարհի մէջ ցանկութենէ յառաջ եկած ապականութենէն փախած» էի (Բ. Պետ. Բ. 8): Եւ որքան փառք կրնամ մատուցանել մեր Աստուծոյն որ «Մեծ է ողորմութիւնով» (Եփես. Բ. 5), «Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն ու իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը փոխադրեց, որով մենք փրկութիւն ունինք իր արիւնովը, այսինքն մեղքի թողութիւն» (Կող. Ա. 13, 14), եւ մեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց» (Ա. Պետ. Բ. 9):

Տեսնելով թէ հայրենիքս՝ ինչպէս բոլոր աշխարհ «Չարին մէջ է», փափաքը ունեցայ Աստուծոյ շնորհաց Աւետարանը քարոզելու: Նկատեցի որ Տէրը իր աշակերտներուն կ'ըսէ, «Հունձքը շատ է, բայց մշակները քիչ» (Մատ. Թ. 39), Ուստի իմ պաշտօնս ձգեցի Տէրոջը գործին մէջ աշխատելու համար՝ միայն իրեն վստահելով: Բայց միեւնոյն ատեն զորմ մը փնտռեցի Պօղոս առաքեալին օրինակին հետեւելով (Գործ. Ի. 34):

Այժմ ուրախութիւն ունիմ վկայելու թէ Տէրը ինձի ինչ սքանչելի բաներ ըրաւ, եւ հոչակելու թէ այս մեծ փրկութիւնը տուած է ամէն անոր որ կը հաւատայ Յիսուս Քրիստոսի: Ո՛չ կրօնական արարողութիւնները, ո՛չ կրթութիւնը, ո՛չ դրամը, ոչ բարեգործութիւնները երբեք չեն կրցած մեղաւոր մը փրկել. փրկութեան միայն մէկ միջոց կայ, այն է Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին, որ «Բոլորովին կարող է ապրեցնելու զանոնք որ իրմով Աստուծոյ կուգան» (Եբբ. Է. 25)

ԵԱ ՍԻՍՍՕՐՕ

Թարգ. «ՂԱՐԷՂ»-էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՖ

ԿՈՒԻՆԵՐ ՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԵՐ

«Բանբեր»ի նոյեմբերի (1932) թւոյն մէջ պատմեցինք թէ ինչպէս սկսաւ Հերնհոլթի եղբայրական միութեան միսիոնարութիւնը: Սատանան ուզեց այդ օրհնաբեր գործը իր սկզբնաւորութեան մէջ իսկ խեղդել: Անիկա իր հարուածը ուղղեց գործին ղեկավարին՝ Յինցէնտորֆի դէմ՝ լարելով Սաքսոնիոյ ազնուականութիւնն ու եկեղեցականութիւնը: Առաջինը կը խորհէր թէ այս տարօրինակ կոմսը իր կրօնական գործունէութիւնովը ոչ թէ միայն ինքզինքը, հապա նաեւ ազնուական ամբողջ դասակարգը կ'անպատուէր, իսկ երկրորդը կասկած ունէր Յինցէնտորֆի ուղղադաւանութեանը նկատմամբ, քանի որ ան մօտ յարաբերութիւն ունէր մի քանի մոլորեալներու հետ՝ զանոնք շահելու դիտումով: Ոմանք կը կասկածէին նոյնիսկ անոր դարձին ու Աստուծոյ դաւակ ըլլալու մասին, քանզի ան չէր ունեցած այնպիսի զօրաւոր դարձ մը, ինչպէս Պօղոս առաքեալ, հապա Յովհաննէս առաքեալի նման հետզհետէ մեռած էր իր հին մարդուն եւ հետըզհետէ խորացուցած՝ իր հաղորդութիւնը Փրկչին հետ:

Ասկէ զատ, Յինցէնտորֆ իր գործերուն նըկատմամբ կը խօսէր ու կը գրէր այնպիսի եղանակաւ մը որ զինքը մօտէն չճանցողներ կը կարծէին թէ կը չափազանցէ եւ կը մեղանչէ ճշմարտութեան դէմ: Շահեկան է ինչ որ այդ մասին ըսած է իր բարեկամներէն մին. — «Քեզ ու քու գործդ լաւ մը ճանչնալէս ի վեր գիտեմ եւ ապահով եմ թէ քու պատմածներդ ճշմարիտ են: Բայց կը խոստովանիմ թէ քեզ տեսելէս առաջ շատ բաներ ինծի ալ անհաւատալի կը թուէին: Ուստի երբեք վշտանալու չես եթէ ուրիշներ չին հաւատար»:

Այսուհանդերձ պէտք է ըսել թէ հաւատացեալներէն շատերու նման՝ Յինցէնտորֆ ալ այս հալածանքներուն ենթարկուեցաւ ոչ թէ միայն Յիսուսի աշակերտը ըլլալուն, հապա նաեւ իր անձնական թերութիւններուն պատճառաւ: Նախ անիկա մասնաւոր տկարութիւնը ունէր ուշադրութիւն գրաւող բաներու ետեւէն վազելու երկրորդ, քարծր դասակարգի մը, ազնուականութեան պատկանիլն ալ մեծ փորձութիւն մըն էր իրեն: Սատանան անոր վրայ յաճախ այդ կողմէն կը յարձակէր եւ ծանր վէրքեր կուտար:

Այսպէս թէ այնպէս կ'դերականներուն եւ ազնուականներուն հակառակութիւնը 1733էն սկսաւ եւ հետզհետէ սաստկացաւ մինչև որ Յինցէնտորֆ Սաքսոնիայէն դուրս վաճառուեցաւ 1736ին: Բայց Հերնհոլթի եղբայրական միութեան թոյլ տրուեցաւ շարունակել իր գործունէութիւնը՝ իր մէթոտներովը: Քննիչներէն մին, Տրէզաւրնի հովուապետը, եղբայրներուն ըսաւ. — «Դուք աստուածավախ եկեղեցի մըն էք: Թող այս բանը չձառայէ ձեզ հպարտացնելու, հապա հաւատարմութեան մղելու: Դուք ալ միզի նման ուղիղ վարդապետութիւն ունիք. ձեր վարչական ձեւը միայն չունինք մենք»:

Նախապէս Յինցէնտորֆի շատ ծանր պատիժ մը թուեցաւ ոճրագործի մը պէս աքսորուիլը. քանզի նա Սաքսոնիոյ իշխանը կը սիրէր իբր երկրին հայրը եւ իր սիրտը զօգուած էր իր հայրենիքին՝ սիրոյ բաղձաթիւ կապերով: Ամենէն դժուարը այն էր որ ասով իր կեանքի ամբողջ գործն ալ կը վտանգուէր: Ուզած էր Աստուծոյ զաւակներուն միջեւ հաղորդակցութիւն հաստատել, եւ այժմ ինքը կը վաճառէր իբր մոլեռանդ մը: Միեւնոյն առնէ իր ազդեցութենէն կը զըրկըւէր առաջին եղբայրական միութիւնը, Հերնհոլթի համայնքը, որուն սկզբնաւորութեանը եւ շինութեանը համար գործելու արժանացուցած էր զինքը Աստուծոյ:

Այսու ամենայնիւ Յինցէնտորֆ չմոլորեցաւ իր հաւատքէն. քանզի չէր սպասեր որ իր հաւատքին փոխարէն՝ Տէրը զինքը երկրաւոր բարիքներով վարձատրէր, ինչպէս իր հետեւեալ տողերը կը ցուցնեն. — «Աստուած սովոր է իր բարիքները իւրաքանչիւր արարածի պէտքին համաձայն բաժնելու: Բնական է որ Անոր անձնատուր եղող անձերը ամենէն քիչ պէտքը կը զգան ու կարեւորութիւն կուտան երկրաւոր պարգեւներուն: Ուստի այս կեանքի բազմաւորութենէն ամենէն մեծ բաժինը կը ստանան այն մարդիկը, որոնք ամենէն քիչ հաճելի են Աստուծոյ»:

Ահա այս հաւատքով զինուած՝ ջանաց իր դէմ ելած հալածանքը օրհնութեան աղբիւրի վերածել: Նախ ինքզինքը անձնաքննութեան ենթարկելով՝ արդէն իր աքսորէն առաջ 1734ին տեսաւ թէ Յիսուսի քաւչական զոյր քրիստոնէական հաւատքի կեդրոնն է: Ուստի զայն դարձուց իր ու եղբայրներու վկայութեան ու քարոզութեան զըլք խաւոր նիւթը: Երբ ուրիշներ կը ծագրէին զիրենք ըսելով, «Եղբայրները Յիսուսի արիւնէն ու վէրքերէն զատ ուրիշ բան չեն ճանչնար», Յինցէնտորֆ կը պատասխանէր, «Եթէ եղբայրները մարդոց հաճոյ ըլլալու համար այս գոհարը մէկդի նետէին, կամ եթէ Քրիստոսի խաչին քարոզութիւնը այնպէս զգեստաւորէին որ այս աշխարհի իմաստուններէն աւելի քիչ զայնթակողութիւն պատճառէր, եւ եթէ անոնք իրենց բաւականութիւնը չգտնէին Յիսուսի մահուան մէջ, այն ատեն անարժան եղած պիտի ըլլային այս գաղտնիքի յայտնութեանը եւ պէտք էր որ շնորհագրեկուէին»:

Երկրորդ, իր աքսորը գործածեց իբր միջոց մը աւելի ընդարձակ գործունէութեան: Մորավեան եղբայրներու հայրենագրկութիւնը՝ արդէն իր ջանքերով առիթ եղած էր միսիսնարական օրհնարներ գործի: Հիմա ալ իր աքսորը միջոց ըրաւ աւելի ընդարձակածաւալ գործունէութեան: Իր հայրենիքը նկատեց այն երկիրները, ուր իր Տէրով համար ամենէն շատ կրնար գործել: Հայրենագրուրկ ու թափառական հայերու համար կարեւոր է կարգալ իր հետեւեալ տողեքը, «Երբ մարդ խորհի թէ ինք իր բոյնին մէջ մեռնելու է, կը խորհի անձնասիրաբար: Այդպիսի խորհուրդ մը կրնայ ազդեցութիւն բանեցնել իր ամբողջ կեանքին վրայ, զինքը զերին ըսել իր յամառութեանը եւ արգիլել իր բոլոր գործունէութիւնը Փրկչին համար: Հոն կ'ըլլայ մեր հայրենիքը ուր ամենէն շատ գործ կայ ըսելիք Փրկչին համար»:

Այսպէս զազմութիւններով եւ փափաքներով լեցուած՝ մտաւ արտասահման: Որպէսզի հոն ալ իր գործը արգելքներու չբաղխէր՝ նախ ինքզինքը քննել տուաւ ուղղամիտ եւ հեղինակաւոր աստուածաբաններու, որոնք հաստատեցին թէ Յինցէնտորֆի հերետիկոս մը չէր — ինչպէս ջանացած էին ցուցնել հակառակորդները — հապա ուղղադաւան մը: Այդ քննութեանց ուրիշ մէկ արդիւնքն եղաւ նաեւ այն՝ որ Յինցէնտորֆի այլեւս պաշտօնապէս ձեռնադրուեցաւ իբր հովիւ, որուն կը ձգտէր իր մանկութենէն ի վեր:

Իր աքսորի առաջին օրերուն Յինցէնտորֆի Բրուսիոյ թագաւոր Ֆրէտէրիք Վիլհէլմի հետ ալ խօսակցութիւն ունեցաւ, որ եղբայրութեան ապագայ գործին համար շատ օգտակար հետեւանք ունեցաւ: Ան ոմանց կողմէ թագաւորին ներկայացուած էր որպէս յիմար մը. սակայն վերջինս առաջին խօսակցութեան առթիւ իսկ նշմարեց որ ինքը գործ ունէր խելացի ու ազնիւ ծրագիրներ ունեցող մարդու մը՝ հետ: Ուստի երեք օր ժամանակ տուաւ խօսակցելու Յինցէնտորֆի հետ, որ այդ մասին ըսած է, — «Առաջին օրը թագաւորը ինծի հետ խօսեցաւ շատ ցուրտ բայց խորունկ եղանակաւ: Երկրորդ օրը բաց և մտերմիկ կերպով: Իսկ երրորդ օրը յայտարարեց թագուհւոյն ու իր հետեւորդներուն թէ իրեն իմ մասին սուտ ու խաբեբայ բաներ խօսած էին եւ թէ իմ միակ յանցանքս այն էր որ ես կոմս ու աշխարհի մէջ անուն ունեցող մարդ մը ըլլալու հակառակ ինքզինքս Աւետարանին պաշտօնին նուիրած էի: Ինքը զիս ապահովեց թէ ես այլեւս իր վստահութիւնը գրաւած էի ու կրնայի յոյս զնել իր օգնութեանը վրայ»: Թագաւորը իր խոստման համաձայն ալ վարուեցաւ. հրամայեց իր պաշտօնեաներուն որ Յինցէնտորֆի պատշաճ օգնութիւնը չզլանային: Անիկա ատկէ ետքն ալ մինչեւ իր մահը թղթակցութեան մէջ էր Յինցէնտորֆի հետ, որ համարձակօրէն կը ջանար իր նամակներովը նպաստել նաեւ թագաւորին հոգեւոր կեանքի շինութեանը:

Արդ՝ Յինցէնտորֆի պաշտօնապէս ճանչցուած էր իբր Աւետարանի ուղղադաւան պաշտօնեայ և հոս ու հոն արժանացած՝ համակրութեան: Ուստի կրնար սկսիլ իր ընդարձակ գործը արտասահմանի մէջ:

X X X

— 0 —

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒՆԵՐԸ

Տասն ու հինգ տարեկան պատանի մըն էի, իբր աշկերտ հօրեղբօրս գործատեղին կ'աշխատէի երկաթագործութիւն կը սորվէի: Ամենամեծ փափաքս էր հաստատուն եւ ճշդապահ ժամացոյց մը ունենալ գրպանիս մէջ: Կը կարծէի թէ ատով այլեւս երիտասարդ մը, պարոն մը պիտի ըլլայի: Իմ այս բաղձանքիս նկատմամբ թէեւ ոեւէ մարդու բան մը չէի պատմեր, սակայն երբ մէկը ինծի հարցնէր թէ ժամը քանին է, մինչեւ ականջներուս բլթակը կը կարմրէի: Երբեմն ալ ձեռքս դէպի բաճկոնիս գրպանը կը տանէի եւ սաստիկ կը բարկանայի, երբ հոն միմիայն զմելի մը կը գտնէի:

Երբ կէս օր մը սենեակը կը մտնէի, լսեցի որ հայրս ըսաւ մօրս, «Կին, շուտ ըրէ, Ադամի հնչող եւ ոսկեղէն ժամացոյցը պահէ»: Ես այնպէս ցուցուցի թէ բան մը չլսեցի, բայց այդ օրէն ի վեր հպարտ հպարտ կը քալէի փողոցները եւ ոսկեղէն կադանդի մը կը սպասէի: Նաեւ ուշադրութեամբ կը դիտէի մարդիկը հասկնալու համար թէ անոնցմէ ով ժամացոյց ունէր. ունեցողները բաղդաւոր կը նկատէի եւ չունեցողները դժբաղդ: Իսկ ընկերներուս ալ կ'ըսէի թէ ես կադանդի ատեն իրենց պիտի ցուցնէի զարմանալի բան մը, որուն վրայ իրենց բերանը բաց պիտի փնար: Նոյն օրերուն զմելիս բաճկոնիս ձախ գրպանէն ալին մէջ փոխադրեցի, որպէսզի ձախին մէջ տեղ բացուէր ոսկեղէն ժամացոյցին համար: Նաեւ կը խորհէի թէ ատով ժամացոյցը մօտ կը գտնուի սրտիս եւ իր թիք-թաքովը կրնայ մըրցիլ անոր բաբախումներուն հետ: Միայն մէկ բան զիս կը վշտացնէր. կը ցաւէի որ ոսկեղէն ու հնչող ժամացոյցս չպիտի կրնայի կրել այնպէս, որ բոլոր մարդիկ տեսնէին զայն ու հիանային իմ վրաս:

Վերջապէս եկաւ կադանդը: Երբ զարդարուած ու լուսավառ սենեակի դուռը բացուեցաւ, ինչպիսիք՝ ուրախալից յոյսերով սկսաւ զարնել սիրտս: Եւ իրաւ ալ կադանդի սեղանին վրայ դրուած էր իմ ժամացոյցս, սակայն վա՛յ իմ գըլխուս, անիկա արծաթեայ էր: Բայց յետոյ խորհեցայ «Վնաս չունի, արծաթն ալ ազնիւ մետաղ մըն է, բաւական է որ հնչող, զարնող ժամացոյց մըն է»: Ամբողջ ուժովս սեղմեցի շարժիչը, որ ժամացոյցը հնչէ: Որքա՛ն մեծ եղաւ սակայն յուսահատութիւնս, երբ տեսայ որ չէր ալ հնչեր. կարծես թէ երկինքէն վար ինկայ. սաստիկ վըշ-

տացած դռնէն դուրս սողացի, գացի խցիկս եւ սկսայ դառնապէս լալ: Այո, նոյնիսկ խորհեցայ, լաւ պիտի ըլլար կեանքիս վերջ տալ, քանզի այլեւս ինծի համար հրապոյր չունէր աշխարհը:

Երբ այսպէս պուխս ծռած կուլայի ու կը խորհէի, յանկարծ փափուկ ձեռք մը սկսաւ շոյել ճակատս. բարի մայրս էր որ շատ քաղցր ձայնով մը ըսաւ ինծի, «Ագամ, խելքդ պուխդ բեր, երախայ չես, հայրդ միայն կատակ ընել ուզեց, երբեք չար բան մը չունէր իր միտքին մէջ: Դուն գիտես մենք հարուստ չենք եւ չենք կըրնար քեզի ոսկեղէն ժամացոյց գնել: Բայց արծաթեան ալ շատ լաւ է ու ոսկեղէնին պէս ճշդապահ. մեզի եկուր կազանդի սեղանին քով»: Ես գացի, բայց ուրախ ու գոհ չէի: Յետոյ երբ մահիճ դացի բարկութիւնս անգամ մըն ալ սաստկացաւ, ուզեցի նոյնիսկ պատուհանէն դուրս նետել արծաթեայ ժամացոյցը, որ իր զուարթ թիք թաքովը կարծես զիս կը ծաղրէր: Հետեւեալ օրերը շատ զգուշութեամբ կը խուսափէի իմ ընկերներէն կամ կը կոճկէի իմ թիկնոցակս երբ անոնցմէ միոյն հանդիպէի, որպէսզի անոնք չի տեսնէին իմ արծաթեայ պարզ ժամացոյցը: Բայց մէկն ալ բան չհարցուց. անոնք արդէն շատոնց մոռցած էին իմ անապարծութիւններս:

Սակայն ժամանակի ընթացքին այս դիպուածը ինծի համար շատ կըթիչ եւ օգտակար եղաւ. քանի՜ անգամ ես ասկէ շատ աւելի վըշտադիմ յուսալուքութիւններ ունեցած եմ. ոսկեղէն բազդի մը ետեւէն վազած եմ, բայց միայն արծաթեայ մը գտած եմ, մեծ բանի մը յուսացած եմ, սակայն միայն փոքր մը ելած է դէմս: Կը խորհէի թէ պիտի կարենայի աշխարհի մէջ փայլիլ, մեծ անուն վաստակիլ, բայց ըստիպում էի ամօթահար ըլլալ: Եւ եթէ տեսնեմ մէկը որ դժգոհ է, քանզի կը յուսար կեանքի մէջ բարձր դիրքի մը հասնիլ եւ աշխարհահռչակ անուն վաստակիլ, բայց ստիպուեցաւ անոնցան պաշտօնով մը զոհանալ եւ անծանօթ անկիւն մը ծածկուած մնալ, այն ատեն կ'ըսէի, «Այդ մարդը ոսկիէ հնչող ժամացոյցին ետեւէն կը վազէ դեռ»: Այդ փափաքը հետզհետէ մարած է իմ մէջս, ալ չեմ փնտռեր ոսկիէ ժամացոյց: Սակայն իմ արծաթեայ ժամացոյցս այսօր ալ, այդ դէպքէն 40 տարի յետոյ, դեռ իմ զրպանս է եւ մէկ վայրկեան իսկ չչեղիր ճիշդ ժամանակէն:

Սիրելի պատանի, թերեւս դուն ալ քու մըտքիդ մէջ ոսկիէ ժամացոյց մը, կեանքի բարձր ասպարէզ մը կը հալածես, կը ձգտիս դիրք մը,

որ վեր է քու պատեհութիւններէդ ու կարողութիւններէդ: Զգուշացիր որ յուսալուք չըլլաս. միշտ միտք բեր ծերուկ Սիրաքի խօսքը, «Սիրելի զաւակս, խոնարհ դիրքի մէջ կեցիր. այս աւելի լաւ է քան այն ամէնը որու ետեւէն կը վազէ աշխարհը»: Յիշէ նաեւ Պետրոս առաքեալի խօսքը, «Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ բայց խոնարհներուն շնորհք կու տայ» (Ա. Պետ. Ե. 5):

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԻՍՏՐԻՍ.—

Անցեալ տարի Աւստրիոյ մէջ 3724 հոգի աւետարանական եկեղեցւոյն զարծած են: Ասոր վրայ աւելցնելով Պոնեմիոյ, Մորավիոյ, Սիլեզիոյ գերման եւ չեխ համայնքներուն զուրսէն եկած յաւելումը, 1934ին աւետարանական եկեղեցւոյ զիրկը եկողներուն թիւը կը բարձրանայ 9000ի:

ՌՈՒՍԻԱ.—

Հակառակ տիրող հալածանքին՝ ներկայիս Ուքրաինոյ մէջ 39 բողոքական համայնքներ գոյութիւն ունին, որոնցմէ 21ը բարեկարգեալ եւ 18ը՝ լուսեւրական: Ունին միմիայն 15 հովիւներ:

45ի չափ երիտասարդ հովիւներ Լէնինկրատի օտտուածաբանական ճեմարանէն ելլելով՝ եկեղեցւոյ ծառայութեան մէջ պիտի մտնեն: 30 հովիւներ ներկայիս վար զրուած են տակաւին Սիպերիոյ մէջ, ոմանք բանտարկուած, ուրիշներ տաժարանի տաշխատանքի դատապարտուած:

ԶՈՒԻՑԵՐԻԱ.—

«Լիկա ի նպատակ քրիստոնէութեան» կոչուած միութիւնը 170 000 ստորագրութիւն հաւաքած է՝ Ռուսիոյ մարտիրոսներուն ի հաշիւ իր մատուցանելիք խնդրագրին համար: Խնդրագիրը փութացուած է Դաշնակցային Խորհուրդին՝ անոր միջամտութիւնը հայցելու Ազգերու Դաշնակցութեան մօտ, Ռուսիոյ մէջ խղճի ազատութիւն ստանալու համար: Այս դիմումը աջակցութիւնը կը վայելէ պետութեանց 37 խորհրդականներուն: Սովիէթական նոր սրտում մը կը յայտարարէ թէ մինչեւ Դեկտեմբեր 31, 1935, բոլոր պաշտամունքի վայրերը փակուած պիտի ըլլան:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39, Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍՍԱՅԻ ՄԷՉ

(Շարանաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30 ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 1/ Rue de l'Eclipse

Շարանաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիէնի, Սէն Մարկի, Սէն Մարկրի-
թի, Սէն ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն ԼՈՒ.—

Կիր. ժամը 8 ին մանկանց կիր. դաս:

9. 30 ին Ս. Գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

ՍԷՆՔ՝ ՄԱՐԿԻԹ.—

Կիր. ժամը 16 ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅՈՒԱ.— Քարոզիչ՝ Պրն. Ս. Պագգաշեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՅ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԵԼԻ.—

Կիր. ժամը 10 ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13 ին մանկանց կիր. դպրոց:

14 ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԼԱՆՍ.— Քարոզիչ՝ Պրն. Վաֆան Սահակեան,
18 Rue de l'Isle.

Կիր. ժամը 13 ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ԹՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼԻՐԵ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45 ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11 ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը:

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45 ին քարոզածողով,

15 ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10 ին քարոզ եւ աղօթածողով:

ԷՍԹԵՐՍՕ.—

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով Pascalի շէնքը

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15 ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ— Քարոզիչ Պրն. Ի. Արրահամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով

51 Rue de la République.

17 ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14 ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՉ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պետաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15 ին քարոզածողով

135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30 ին

37 Rue Tournesfort Paris 5^e

Metro Mouhe Aut. K.

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդաց

Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դուհեաց Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30 ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30 ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville.

ՄԵՐ ՔՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԱՆ

Ա) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Բարի Հովիւր
2. Դուռը զարնող Փրկիչը
3. Յիսուս հովն ու ծովը կը հանդարտեցնէ
4. Մարիամ եւ Մարթա
(մեծութիւն՝ 37 սեմ. երկ. եւ 27 սեմ. լայն)
Գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով
5. Տաք կոյսերը
(մեծութիւն՝ 29 սեմ. երկ. եւ 26 սեմ. լայն)
Գին՝ 4 ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով
6. Լայն եւ նեղ ճամբան.
(մեծութիւն՝ 63 սեմ. երկ. 50 սեմ. լայն)
Ին՝ 6 ֆր. ձեռքէ, թղթ. ծախքով 7

Բ) ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

որոնց իւրաքանչիւրին վրայ կան հետեւեալ համարներէն մին՝ Յովն. Գ. 16, Դարծ. Գ. 12, Փիլ. 7, 8, Ա. Յովն. Գ. 10:
(մեծութիւն՝ 16 սեմ. երկ. 11 սեմ. լայն)
Գին՝ մէկ ֆր. Թղթատարական ապսպրանք 25էն պակաս ըլլալու չէ:

Գ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ

1. Ննդեան քարդեր, (ծաղկանկար կամ պատկեր մը փրկչին մանկութեան կեանքէն, իրեն յարմար Սր. Գրական ոսկեղէն համարով մը օժտուած)
2. Նոր տարուան քարդեր, (ծաղկանկարի մը վրայ Նոր տարուան բարեմաղթութեան հետ նաեւ Ս. Գրական յարմար ոսկեղէն համար մը):
3. Զատիկուան քարդեր, (ծաղկանկար, Զատիկուան բարեւ.

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Post Cheque completն է

H. N. Ghazarossian, 182, 53 Marseille.

Բոլոր ապսպրանքները կանխիկ ըլլալու են:

մաղթութեան հետ նաեւ օրուան յարմար Սր. Գրական ոսկեղէն համար:

Դ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓՐԿՁԻՆ ԿԵԱՆՔԷՆ (քարդի ձեռով)

Գին՝ տիպէնը ձեռքէ վեց ֆրանք, Թղթատարական ապսպրանքներ 25էն պակաս ըլլալու չեն:

Ե) 12 տեսակ գեղեցիկ ծաղկաւոր խաչեր, Ս. Գրական խաչով մը, (Միայն Յիսուս, իմ շնորհքս հերիք է քեզի Քեզ յաւիտեանական սիրով սիրեցի, Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր, Ջանքի մէջ Թուրապրա չըլլար եւայն):

Գին իւրաքանչիւրը 50 սանթ, կամ 3 սէնթ:
Թղթատարով ապսպրանքներ 25 էն պակաս ըլլալու չեն:

Զ) ՊԱՏԻ ԾԱՂԿԵՊԱՏԿԵՐՆԵՐ

ա. Չորս տեսակ: Մեծութիւն՝ 27 սեմ. երկ. 20 սեմ. լայն
Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Յիսուսի ԻՊ. 15, 2) Գալ. ե. 22, 23. 3) Կող. Գ. 4, 4) Ա. Կորնթ. ԺԵ. 57:

բ. Երկու տեսակ ձուածեւ ծաղկեպատկերներ: Մեծութիւնը 27 սեմ. երկ. 16 սեմ. լայն: Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Ա. Յովն. Ա. 7, 2) Յայտ. Բ. 10:

Գին՝ իւրաքանչիւրը 3 ֆր. թղթ. ծախքով 3, 50:

գ) Երկու պատկերներ: Մեծութիւն՝ 33 սեմ. երկ. 23 սեմ. լայն:

1) Մեր քաղաքականութիւնը. Սր. Գրական համարներ՝ Փիլ. Գ. 20 եւ Եբր. ԺԳ. 13, 14: «Իմ Հօրս տունը վերն հոգւոյս բնակարան» երգով:

2) Սպասող ծառան: Նոյն մեծութեամբ: Սր. Գրական համար՝ Ղուկ. ԺԲ. 36: «Դէմ առ դէմ Փրկիչ Տէրոյս հետ» երգով:

Գին՝ իւրաքանչիւրը 4 ֆր. թղթ. ծախքով 4, 50